Թումասյան Դավիթ, Ավետյան Հայկ, Թումաղայան Էդուարդ

ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ աշխատանքում տրավմաների տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումների ապահովման ուղեցույցի (ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի ու ՀՀ ոստիկանության ծառայողների, փաստաբանների և դատավորների համար)

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ աշխատանքի ընթացքում տրավմաների տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումների ապահովման ուղեցույցի կառուցվածքը 7

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձ հասկացությունը 9

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ վարվեցողության կանոնները 17

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հոգեբանական տրավման ու երկրորդային զոհականացումը 25

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ զոհակենտրոն և երեխայակենտրոն մոտեցումները 43

Ամփոփում 56

Առաջարկվող գրականության ցանկ 58

Ներածություն

Մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը[1] տարածված է ամբողջ աշխարհում, և ցանկացած պետություն, բախվելով այս երևույթն, փորձում է օրենսդրությամբ սահմանված հնարավոր բոլոր մեթոդներով և եղանակներով պայքարել դրա դեմ: Պայքարի արդյունավետությունը կախված է բազմաթիվ տարաբնույթ պայմաններից և գործոններից՝ օրենսդրության կատարելությունից, մասնագետների գիտելիքներից ու հմտություններից, պետության կողմից վարվող քաղաքականությունից ու ստանձնած պարտականություններից, բնակչության վստահությունից իրավապահ համակարգի և սոցիալական ծառայությունների նկատմամբ, հասարակությունում տեղի ունեցող սոցիալական ու տնտեսական գործընթացներից, ինչպես նաև բազմաթիվ այլ հանգամանքներից:

Ամբողջ աշխարհում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարն արդյունավետ իրականացնելու համար առաջարկվել և լայնորեն կիրառվում է պայքարի «4P» սկզբունքը (սկզբունքի բաղադրիչների անգլերեն անվանումների սկզբնատառերին համապատասխան), որն իրականացվում է փոխկապակցված 4 ուղղություններով.

1) կանխում (prevention),

2) զոհերի[2] պաշտպանություն և աջակցություն (protection and assistance),

---

[1] Սույն նյութում «մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը» և «մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը» եզրույթները կիրառվելու են որպես հոմանիշներ: Եզրույթների տարբերությունը հաճախ պայմանավորված է այն օրենսդրական ակտերով, որոնք ներկայացվում կամ մեկնաբանվում են:

[2] «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհ» եզրույթի կիրառումը վերջին ժամանակահատվածում վիճարկվում է միջազգային հանրության կողմից՝ պիտակավորող ու խտրական լինելու պատճառով: Այդ եզրույթը փոխարինվում է «մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձ», «մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում վերապրած անձ», «մարդկանց թրաֆիքինգի ենթարկված կամ շահագործված անձ» և այլ եզրույթներով: Սույն մեթոդաբանությունում կիրառվելու են «մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհ», «մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձ», «թրաֆիքինգի կամ շահագործման զոհ» կամ «տուժող» եզրույթները՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ դրանց ամրագրված լինելը և ելնելով այն հանգամանքից, թե ինչ հիմնախնդիրներ են քննարկվելու՝ քրեահրավական կամ քրեադատավարական, թե՝ սոցիալական:

3) քրեական հետապնդում (prosecution),

4) համագործակցություն (partnership):

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհ կարող են դառնալ բոլորը՝ կանայք, տղամարդիկ, երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք, սակայն առավել խոցելի խմբեր են միակողմանի ծնողազուրկ երեխաները, սեռական ծառայություններ մատուցող կանայք, ընտանիքում բռնության ենթարկված անձինք և այլն, ինչից ելնելով նրանց պետք է վերաբերվել զոհակենտրոն մոտեցումների կիրառմամբ՝ պահպանելով մարդու իրավունքները, երեխայի լավագույն շահը, զգայունությունը և բացառելով երկրորդային զոհականացումը:

Սույն նյութը նախատեսված է ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի ու ՀՀ ոստիկանության ծառայողների, փաստաբանների և դատավորների համար, ովքեր առնչվում են մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ և պետք է ընդհանուր պատկերացում ունենան այս երևույթի դեմ պայքարում բազմաթիվ սպառնալիքներին ու ռիսկերին հակազդման միջոցների մասին:

Սույն մեթոդաբանության համար որոշակիորեն հիմք է հանդիսացել ԱՄՆ պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2021 թվականի հուլիսից իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում հրապարակված «Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով քրեական գործերի քննության ընթացքում զոհակենտրոն մոտեցումներ (մեթոդական ուղեցույց դատավորների, դատախազների և քննիչների համար)» վերտառությամբ նյութը, որում ներկայացված դիրքորոշումները համապատասխան հարմարեցման ներառվել են նաև այս նյութում:

ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի ու ՀՀ ոստիկանության ծառայողների, փաստաբանների և դատավորների մասնագիտացումը և նրանց կողմից ոչ միայն մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման մասին մանրամասն իմացությունը, այլ նաև մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված

անձանց հետ աշխատանքում տրավմաների մասին տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումների ապահովման, մասնավորապես՝ տարիքի, մտավոր զարգացվածության աստիճանի ու սեռի առանձնահատկություններով պայմանավորված վերաբերելի գիտելիքների և հմտությունների կիրառումը խիստ կարևոր է և անկյունաքարային:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի «4P» սկզբունքն արդյունավետորեն իրականացնելու համար զոհակենտրոն և երեխայակենտրոն մոտեցումների կիրառումը, ինչպես նաև պատշաճ դատաքննչական պրակտիկայի ձևավորումն այն առաջնային քայլերից է, որի միջոցով կապահովվեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի իրավունքները, կնվազեցվի նրանց զոհականացումը, կդյուրինանա հասարակությունում նրանց վերաինտեգրումը:

2010-2022թթ.-ին ՀՀ-ում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով քննված քրեական գործերի թիվը հետևյալն է՝

1) 2010թ-ին 11 քրեական գործ,
2) 2011թ-ին 8 քրեական գործ,
3) 2012թ-ին 19 քրեական գործ,
4) 2013թ-ին 12 քրեական գործ,
5) 2014թ-ին 9 քրեական գործ,
6) 2015թ-ին 14 քրեական գործ,
7) 2016թ-ին 10 քրեական գործ,
8) 2017թ-ին 9 քրեական գործ,
9) 2018թ-ին 7 քրեական գործ,
10) 2019թ-ին 11 քրեական գործ,
11) 2020թ-ին 10 քրեական գործ,
12) 2021թ-ին 16 քրեական գործ,
13) 2022թ-ին 14 քրեական գործ:

Տարիների ընթացքում կատարած դիտարկումները վկայում են, որ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկվելու վտանգի տեսանկյունից առավել ռիսկային են ցածր կրթական ցենզով, եկամուտ չունեցող կամ անկայուն եկամուտով երիտասարդ կանայք, բազմազավակ, միայնակ մայրերը, բռնության ենթարկված անձինք, աղքատ ընտանիքների երեխաները: Հաջորդ խոցելի խումբը կազմում են տղամարդիկ և աշխատանքային միգրանտները, իսկ վերջին 2-3 տարիների ընթացքում բարձրացել է նաև մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հատուկ կատեգորիայի զոհերի խմբին պատկանող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խոցելիությունը և ներգրավվածությունն այս հանցագործությանը:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ աշխատանքի ընթացքում տրավմաների տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումների ապահովման ուղեցույցի կառուցվածքը

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ քրեական վարույթի համար զոհակենտրոն մոտեցումը միջազգային հանրությանը հայտնի է որպես «լավագույն փորձ», որի ներդրումն ազգային պրակտիկայում խիստ կարևոր է ու ցույց է տալիս պետության վերաբերմունքը մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքար: Զոհակենտրոն մոտեցումները կիրառելի են ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի ու ՀՀ ոստիկանության ծառայողների, փաստաբանների և դատավորների՝ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի գործունեության յուրաքանչյուր փուլում՝ սկսած դեպքի բացահայտումից և քրեական վարույթի ամենավաղ փուլից մինչև դատաքննություն և անգամ դրանից հետո:[3]

Այդ իսկ պատճառով ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի ու ՀՀ ոստիկանության ծառայողները, փաստաբանները և դատավորները մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ շփվելիս առաջնահերթ պետք է ուշադրություն դարձնեն զոհակենտրոն մոտեցումների վրա ու տեղեկացված լինեն այդ անձանց մոտ հնարավոր տրավմաների մասին: Այդ իսկ պատճառով փորձագիտական խմբի կողմից մշակվել է «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ շփման ընթացքում տրավմաների տեղեկացվածության և զոհակենտրոն մոտեցումների ապահովման ուղեցույց», որտեղ ընդհանուր և եզրափակիչ դրույթների հետ մեկտեղ ներկայացված են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 188-190-րդ հոդվածներով նախաձեռնված քրեական վարույթների քննության առանձնահատկությունները, այդ վարույթներով տուժող

[3] Մանրամասն տես՝ https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/Victim-Centered-Approach-to-Human-Trafficking-Cases-FINAL.pdf

ճանաչված անձանց հետ վարվեցողության կանոնները, ինչպես նաև այդ գործերով քննչական որոշ գործողությունների առանձնահատկությունները:

Ուղեցույցում ներկայացված մոտեցումները հիմնված են միջազգային լավագույն փորձի ու ընդունված մոտեցումների վրա, սակայն ենթարկվել են որոշակի տեղայնացման, հետևաբար՝ փոփոխությունների՝ հաշվի առնելով ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգավորումներն ու ՀՀ-ում ձևավորված դատաքննչական պրակտիկան: Ուղեցույցի բովանդակության ձևավորման վրա էական ազդեցություն է ունեցել այն փաստը, որ 2022թ.-ի հուլիսի 1-ից ՀՀ-ում ուժի մեջ են մտնել ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերը:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձ հասկացությունը

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհը մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված այն անձն է, ով այդպիսին է ճանաչվել Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի որոշմամբ: Անձին՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհ ճանաչելը հետապնդում է նրան սոցիալական աջակցություն, պաշտպանություն տրամադրելու և հասարակությանը սոցիալական վերաինտեգրման արդյունավետ հնարավորություն: «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) նախատեսում է նաև հավանական զոհ հասկացությունը, որը նախանույնացման փուլում գտնվող անձն է, որի վերաբերյալ դեռ չի կայացվել զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելու մասին որոշում, և դեռևս պարզ չէ տվյալ անձի զոհ հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքը:

Օրենքը նախատեսում է նաև «հատուկ կատեգորիայի զոհ» եզրույթը և որպես այդպիսին մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված այն անձն է, ով հայտնաբերման պահին եղել է երեխա կամ անօգնական վիճակում գտնվող անձ, և այդպիսին է ճանաչվել վերը նշված նույնացման հանձնաժողովի որոշմամբ: Ավելին, երեխա համարվում է ոչ միայն 18 տարին չլրացած անձը, այլև այն անձը, որի տարիքն անհայտ է, բայց կան ողջամիտ կասկածներ, որ դեռ չի լրացել նրա 18 տարին: Այսինքն, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին պետք է վերաբերվել որպես երեխայի, եթե նրա տարիքը հայտնի չէ և ողջամտորեն նրա 18 տարին դեռ չի լրացել:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովը մարդուն որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելու իրավասությամբ օժտված միակ մարմինն է: Օրենքով նախատեսված համապատասխան աջակցության

և պաշտպանության տրամադրման նպատակով մարդը կարող է ճանաչվել զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ բացառապես նույնացման հանձնաժողովի կողմից, անդամների բաց քվեարկությամբ, մեծամասնական սկզբունքով: Ձայների հավասար բաշխման դեպքում, եթե համընկել են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների դիրքորոշումները, ապա նախապատվությունը տրվում է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների դիրքորոշմանը, այլապես ձայների հավասար բաշխման դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը:[4]

Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը հատուկ սահմանում է, որ մարդուն զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելը և քրեադատավարական նորմերին համապատասխան նրան տուժող ճանաչելը տարբեր նպատակներ հետապնդող գործընթացներ են և որևէ կերպ չեն կարող բխել միմյանցից, սակայն դրանց համար հիմք համարվող տեղեկությունները կարող են փոխադարձաբար օգտագործվել, եթե այդ տեղեկությունների օգտագործումն արգելված չէ օրենքով: Հետևաբար, եթե մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ, ապա մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձն արդեն ձեռք է բերելու տուժողի դատավարական կարգավիճակ: Հարկ է նշել, որ պրակտիկան ցույց է տալիս, որ եղել են եզակի դեպքեր, երբ քրեական վարույթով տուժող ճանաչված անձինք ձեռք չեն բերել զոհի կարգավիճակ և հակառակը, սակայն այն դեպքերը, երբ զոհը ձեռք չի բերել տուժողի կարգավիճակ, եղել են առավել հաճախակի: Ներկայացված երկու իրավիճակներն էլ պայմանավորված են եղել այն

[4] Նույնացման հանձնաժողովը կազմավորվում է մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերին նույնացնելու գործում փորձառու հասարակական կազմակերպությունների, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներից, որոնք նույնացման հանձնաժողովում հանդես են գալիս հավասար իրավունքներով: Հասարակական կազմակերպությունները և պետական մարմինները նույնացման հանձնաժողովում ներկայացված են անդամների հավասար քանակով: Նույնացման հանձնաժողովի նախագահն է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչը: Նույնացման հանձնաժողովի աշխատակարգը սահմանվում է ՀՀ կառավարության որոշմամբ:

ցուցիչների տարբերությամբ, որոնք կիրառվում են անձին մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով տուժող կամ զոհ ճանաչելու համար:

Օրենքի գործողությունը տարածվում է մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված այն անձանց նկատմամբ, որոնք՝

1) ՀՀ քաղաքացի են կամ ունեն ՀՀ-ում փախստականի կարգավիճակ և հայտնաբերման պահին գտնվում են ՀՀ-ում,

2) օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ են և հայտնաբերման պահին գտնվում են ՀՀ-ում,

3) ՀՀ քաղաքացի կամ ՀՀ-ում բնակության իրավունք ունեցող քաղաքացիություն չունեցող անձ են կամ ունեն ՀՀ-ում փախստականի կարգավիճակ և հայտնաբերման պահին գտնվում են օտարերկրյա պետությունում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ տուժողը ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, պետությունը, համայնքը կամ միջազգային կազմակերպությունը, որի վերաբերյալ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ենթադրյալ հանցանքով նրան պատճառվել է վնաս կամ կարող էր պատճառվել՝ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելու դեպքում:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով նախձեռնված քրեական վարույթների առնչությամբ կարելի է պնդել, որ տուժող են ճանաչվելու մարդու թրաֆիքինգի ենթարկված կամ շահագործված անձինք: Հարկ է նշել, որ վարույթի մասնակից չհանդիսացող ցանկացած անձ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում իրավունք ունի միջնորդելու իրեն ճանաչել տուժող: Հետևաբար, եթե անձին ենթարկել են թրաֆիքինգի կամ շահագործման, և եթե նրան վարույթ իրականացնող մարմինը դեռ չի ճանաչել տուժող, ապա նա կարող է նման կարգավիճակ ձեռք բերել համապատասխան միջնորդություն ներկայացնելով:

Տուժողներն ունեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ, սակայն դրանց իրացման ընթացքում կարևորվում է զոհակենտրոն մոտեցումների կիրառումը և երկրորդային զոհականացումը բացառելը:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքով նախաձեռնված քրեական վարույթներով տուժողների մասնակցությամբ բոլոր քննչական կամ այլ վարութային գործողությունները պետք է իրականացվեն հատուկ վերապատրաստված և թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի կարիքներն ու առանձնահատկությունները հստակ պատկերացնող մասնագետների կողմից:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում ընդունված է հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց բաժանել երկու խմբերի՝

1. ովքեր մշտապես ունեն հատուկ պաշտպանության կարիք - երեխաներ, փախստականներ, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհեր, սեռական հանցագործության զոհեր, ընտանեկան բռնության զոհեր,

2. ովքեր հատուկ պաշտպանության կարիք ունեն՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից - կանայք, ազգային և սեռական փոքրամասնություններ, օտարերկրյա քաղաքացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք, տարբեր իրավիճակներով պայմանավորված իրենց իրավունքներն ու շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից զրկված անձինք:[5]

Օրենքի 20-րդ հոդվածով սահմանվում է, որ ցանկացած զոհ և հատուկ կատեգորիայի զոհ ունի օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցություն և պաշտպանություն ստանալու իրավունք: Զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի պաշտպանության և աջակցության ձևերը, տեսակները, տևողությունը, չափերը որևէ կերպ չեն կարող փոխկապակցված կամ պայմանավորված լինել իրավապահ

[5] Թումասյան Դ. Տուժողի կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում: Երևան, 2020, էջ 95:

մարմինների կողմից ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող գործողություններին նրանց մասնակցության հանգամանքով:

Միջազգային փաստաթղթերում ու մասնագիտական գրականությունում վերը նշված եզրույթների փոխարեն տարեց տարի լայնորեն տարածում է ստանում «վերապրած» եզրույթը, մասնավորապես՝ անձին չպիտակավորելու, չխարանելու, նրան հավելյալ հոգեբանական անհարմարություն չպատճառելու մոտեցումներն ընդգծելու համար: «Վերապրած» եզրույթը լայնորեն օգտագործվում է սոցիալական կամ հոգեբանական ծառայություններ մատուցող մասնագետների կողմից կամ կազմակերպություններում՝ ճանաչելու ուժն ու քաջությունը, որն անհրաժեշտ է դժվարությունների հաղթահարման համար: Մարդու թրաֆիքինգ կամ շահագործում «վերապրած» անձինք անցել են բազմաթիվ փորձություններով ու այդ ամենից հետո արժանի են հարգալից ու անխտրական վերաբերմունքի:[6]

Անկախ կիրառվող եզրույթից՝ բնակության վայրի տեսանկյունից առավել խոցելի են մարզերի, հատկապես հեռավոր շրջանների բնակիչները, մանկատների շրջանավարտները, իսկ երեխաների շրջանում՝ անբարենպաստ ընտանիքների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, հատուկ դպրոցների սաները: Այս բոլոր խմբերի ներկայացուցիչների համար բնորոշ է իրավական և սոցիալական անպաշտպանվածությունը, ցածր իրավագիտակցությունը, սոցիալական պաշտպանության համակարգի մասին ցածր տեղեկացվածությունը կամ այդ համակարգի նկատմամբ թերահավատությունը:[7]

---

[6] Մանրամասն տես՝ Թումասյան Դ., Վիրապյան Է., Դավթյան Ս. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանությունն ու աջակցությունը. Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար. Երևան, 2022: Վերը նշված ձեռնարկը մշակվել է ԱՄՆ պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2021 թվականի հուլիսից իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում:

[7] Մանրամասն տես՝ ՀՀ ԱՍՀՆ և ԵԱՀԿ «Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն» ծրագրի տարեկան զեկույցը, 2010:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման վտանգի տեսանկյունից չկա տարիքային որևէ օրինաչափություն: Ըստ բացահայտված դեպքերի ՀՀ-ում ռիսկային են 0-63 տարեկան անձինք՝ կանայք և տղամարդիկ, տղաներ և աղջիկներ, առողջ և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք:

Ըստ վիճակագրական տվյալների՝ 2009-2021թթ. ընթացքում շուրջ 150 անձ ենթարկվել է թրաֆիքինգի կամ շահագործման, իսկ 2015թ-ի հոկտեմբերից, երբ ստեղծվեց մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովը, այդ մարմնի կողմից որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ նույնացվել է 60 անձ[8]: Այդ անձանց գերակշիռ մասը կազմել են կանայք և երեխաները: Երեխաների թվում հաճախ են հանդիպում հատուկ դպրոցների սաները:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման նույնացված զոհերը ենթարկվել են թրաֆիքինգի կամ շահագործման թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանից դուրս:

Տղամարդկանց շրջանում (հատկապես՝ արտագնա աշխատանքի մեկնողների) մեծ է աշխատանքային շահագործման դեպքերի թիվը: Տղամարդկանց պահել են ստրկության մեջ կամ ստրկությանը նմանվող վիճակներում (ՌԴ-ում), կանանց ստիպել են զբաղվել պոռնկությամբ (Հայաստանում, ԱՄԷ-ում, Թուրքիայում), ենթարկել են աշխատանքային շահագործման (Հայաստանում, ՌԴ-ում, Թուրքիայում): Երեխաները ենթարկվել են սեռական և աշխատանքային շահագործման, հատկապես ներգրավվել են մուրացկանության մեջ: Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի թվում՝ բացի ՀՀ քաղաքացիներից, եղել են օտարերկրյա քաղաքացիներ, ովքեր ինքնուրույն կամ կազմակերպիչների մասնակցությամբ տեղափոխել են ՀՀ և շահագործվել այստեղ:

Այսպիսով, տարբեր ժամանակներում կատարված բոլոր վերլուծությունները վկայում են, որ ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման պատճառների

[8] Ինչպես արդեն նշվել է վերևում՝ նույնացված զոհերի և քրեական վարույթներով տուժող ճանաչված անձանց թիվը տարբեր է:

անփոփոխ մնալու պարագայում[9], միևնույնն է որոշակի զարգացումներ են տեղի ունեցել հանցագործության դրսևորումների առումով. օտարերկրյա պետություններում կանանց սեռական շահագործման դեպքերին զուգահեռ շատ արագ զարգացան և տարածվեցին պարտապանի ստրկացման, ստրկությանը նմանվող իրավիճակների, հարկադիր աշխատանքի, մուրացկանության շահագործումը, որից տուժում են և՛ կանայք, և՛ տղամարդիկ, և՛ երեխաները: Ներգրավված երեխաների թիվը հատկապես մեծ է նրանց համար արգելված և վնասակար աշխատանքների տարբեր ձևերում:

Մուրացկանության մեջ ներգրավվածների թվին ավելացվել են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ՀՀ չափահաս քաղաքացիներ՝ կանայք և տղամարդիկ: 2018-2021թթ-ի ընթացքում հայտնաբերվել է մուրացկանության մեջ ներգրավված 6 չափահաս անձ, որից 2-ը՝ իգական, իսկ 4-ը՝ արական սեռի:

Հատուկ կատեգորիայի զոհերի թվին պատկանող չափահաս անձանց աշխատանքային շահագործման և մուրացկանության դեպքերից հիշատակման արժանի են երկուսը: Դրանք բացահայտվել են վերջերս. մի կին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց տուն-ինտերնատի շահառու էր, տարիներ շարունակ ենթարկվել էր աշխատանքային շահագործման հենց խնամքի հաստատության տարածքում աշխատողի կողմից, մյուս դեպքով՝ անձը շահագործվել էր մեկ այլ անձի կողմից, ով, ինչպես և ինքն անօթևան էր և շահագործողի հետ ապրում էր փողոցում: Սա, իհարկե, լրացուցիչ դժվարություններ է ստեղծում զոհերի հայտնաբերման և նույնացման հարցում, քանի որ խոսքը փակ հաստատության մասին է՝ մի դեպքում, և

[9] Աղքատություն, աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց անհավասարություն, բնակչության տարբեր խմբերի համար արդյունավետ զբաղվածության, կրթության, սոցիալական պաշտպանության ծրագրերի ցածրամատչելիություն, այլ ռեսուրսների անմատչելիություն, բնակչության մարգինալացում, տղամարդկանց արտագնա աշխատանք և որպես արդյունք՝ ընտանեկան կապերի թուլացում կամ խզում, միայնակ մայրերի թվի աճ (պատերազմը և քովիդի համաճարակն ընդամենը խորացրել են խնդիրները):

փողոցում բնակվող (հետևաբար գտնվելու վայրը հեշտությամբ փոփոխող) անձի մասին՝ մյուս դեպքում:[10]

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է «տուժող» եզրույթի կիրառումը, ինչն ազգային օրենսդրության պահանջ է, սակայն եզրույթի օգտագործումը չի բացառում զոհակենտրոն մոտեցման կիրառումը, ինչպես նաև տրավմայի նվազեցումը՝ բացառելով երկրորդային զոհականացումը:

[10] Հարկ է նշել, որ Նույնացման հանձնաժողովի կողմից զոհի նույնացումը դեռ չի նշանակում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքի հաստատման մասին, քանի որ նույնացման նպատակը զոհին սոցիալական աջակցություն տրամադրելն է, իսկ հանցագործության փաստը հաստատվելու է քրեական դատավարության ընթացքում՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով: Մանրամասն տես՝ Թումասյան Դ., Վիրապյան Է., Դավթյան Ս. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանությունն ու աջակցությունը. Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար. Երևան, 2022: Վերը նշված ձեռնարկը մշակվել է ԱՄՆ պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2021 թվականի հուլիսից իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ վարվեցողության կանոնները

Միջազգայնորեն ընդունված է, որ բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավունքներից, թրաֆիքինգի կամ շահագործման զոհերն ունեն նաև հետևյալ իրավունքները՝

1. արժանապատիվ ու կարեկցող վերաբերմունքի արժանանալու իրավունք,

2. խտրականությունից պաշտպանված լինելու իրավունք,

3. տեղեկացված լինելու իրավունք,

4. լսված լինելու և տեսակետներ ու մտահոգություններ արտահայտելու իրավունք (իր տարիքին և զարգացվածությանը համապատասխան),

5. արդյունավետ օժանդակություն ստանալու իրավունք,

6. մասնավոր կյանքի գաղտնիության իրավունք,

7. արդարադատության գործընթացում զրկանքներից պաշտպանված լինելու իրավունք,

8. անվտանգության իրավունք,

9. պատճառված վնասի հարթման իրավունք,

10. հատուկ կանխարգելիչ միջոցների իրավունք:

Վերը նշված բոլոր իրավունքների իրացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 13-րդ կետն ամրագրում է, որ հանրային պաշտպանի գրասենյակն անվճար իրավաբանական օգնություն տրամադրում է նաև օրենքով սահմանված կարգով Նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց: Ավելին, իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանը՝

1) խորհրդատվություն է տրամադրում իրավական հարցերով ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր.

2) կազմում է դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ և իրավական բնույթի այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց նախագծեր.

3) որպես վստահորդի ներկայացուցիչ մասնակցում է քաղաքացիական և վարչական դատավարությանը, մասնակցում է գործի քննությանը ՀՀ սահմանադրական դատարանում.

4) որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցում է քրեական դատավարությանը և վարչական իրավախախտումների գործերով վարույթին.

5) որպես վստահորդի ներկայացուցիչ մասնակցում է գործերի քննությանն արբիտրաժային տրիբունալում կամ վեճեր լուծող այլ մարմիններում.

6) ներկայացնում է վստահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական միավորումներում և այլ կազմակերպություններում, օտարերկրյա պետությունների պետական իշխանության մարմիններում, դատարաններում, հետաքննության կամ նախաքննության մարմիններում, միջազգային դատական մարմիններում, օտարերկրյա պետությունների ոչ կառավարական մարմիններում, եթե այլ բան նախատեսված չէ տվյալ երկրի օրենսդրությամբ, միջազգային դատական մարմինների և այլ միջազգային կազմակերպությունների կանոնադրային փաստաթղթերով կամ ՀՀ միջազգային պայմանագրերով:

Նման մոտեցումն առավելագույնս բխում է զոհակենտրոնությունից ու կարող է հանգեցնել թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի իրավունքների արդյունավետ պաշտպանությանը:

Քրեական դատավարության բոլոր մասնակիցները պարտավոր են պահպանել թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի իրավունքները՝ նախատեսված թե՛ ազգային, թե՛ միջազգային օրենսդրությամբ:

Վարույթի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել տուժողների հոգեկան վիճակը, ապրումները, որոնք էականորեն դժվարացնում են իրավապահ մարմնի կամ դատարանի աշխատանքը: Տուժողը միգուցե ի վիճակի չլինի վերհիշելու կամ

նկարագրելու դեպքեր, կենտրոնանալու դժվարություններ ունենա կամ ունակ չլինի որոշումներ կայացնելու: Բացի այդ՝ բռնություն վերապրողներն իրենց անզոր են զգում և չեն կարողանում վերահսկել իրավիճակը: Գրեթե բոլոր զոհերը հակված են իրենց մեղադրելու կատարվածի համար, և հետևաբար տրավմայի ախտանիշների իմացությունն օգնում է մասնագետներին հասկանալու, թե ինչ է կատարվում զոհի հետ, և բացատրելու տրավմայի ազդեցությունները նրանց վրա, ովքեր կարող են շփոթված և վախեցած լինել, քանի որ չեն կարող կառավարել իրենց մարմինն ու հույզերը: Տրավմայի ախտանիշների իմացությունն օգնում է մասնագետներին լուրջ վերաբերվելու ցանկացած զոհի՝ անկախ նրանից, թե նա իրեն ինչպես է պահում՝ ծիծաղում է, թե՝ լալիս, ինքնասպանության մտքեր ունի, թե՝ վրեժի: Մասնագետների համար կարող է դժվար լինել աշխատել զոհի հետ, ով անընդհատ մտափոխվում է կամ մոռանում, թե նրան արդեն ինչ ենք ասել, սակայն չնայած թվարկված բոլոր դրսևորումներին, վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է լինել համբերատար ու փորձել ճիշտ հոգեբանական կոնտակտի հաստատման արդյունքում ձեռք բերել ցանկալի արդյունք:

Հաշվի առնելով մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի հետ տարվող աշխատանքի բարդությունը, նեղ մասնագիտական գիտելիքների անհրաժեշտությունը՝ ՀՀ քննչական կոմիտեում գործում է մասնագիտացված ստորաբաժանում և ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի համաձայն՝ մարդկանց թրաֆիքինգի դեպքերով նախաձեռնված վարույթներով նախաքննությունն իրականացվում է մասնագիտացված ստորաբաժանման քննիչների կողմից: Համանման մոտեցում առկա է նաև ՀՀ ոստիկանությունում, որտեղ կենտրոնական մարմնում գործող մասնագիտացված ստորաբաժանման ծառայողներն անձամբ են իրականացնում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման բացահայտումները կամ համակարգում են դրանք՝ տարածքային մարմինների ծառայողների հետ միասին:

Այսպիսով, ավելի լավ հասկանալով, թե ինչ է նշանակում «զոհակենտրոնությունը» և դրա կիրառման անհրաժեշտությունը՝ դատախազները,

ոստիկանության ծառայողները, քննիչները, փաստաբանները և դատավորները կկարողանան բարելավել իրենց գործողություններն առօրյա աշխատանքում: Հետևաբար, մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերում զոհակենտրոն մոտեցման կիրառումը կբարձրացնի զոհերի նույնացումը, կուժեղացնի մարդու թրաֆիքինգի կամ շահագործման պայքարում քրեական վարույթի արդյունավետությունը:

Կարևոր է հիշել, որ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձինք հաճախ կորցնում են իրենց համար որոշումներ կայացնելու ու դրանց հիման վրա ազատորեն գործելու ունակությունները, ուստի հույժ կարևոր է, որ իրավապահ մարմիններն ու դատարանները հարգեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի՝ իրենց վերաբերյալ որոշումներ կայացնելու ունակությունը, նույնիսկ եթե նրանց ընտրությունը լավագույնը չէ: Մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում վերապրածները չեն կարող հասնել արդարադատության, եթե իրավապահ մարմիններն ու դատարանները չհամագործակցեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի հետ ու մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի ցանկությունները չկարևորեն:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի մեծամասնությունն իրենց շահագործողների կամ թրաֆիքինգի ենթարկողների նկատմամբ ունեն մեծագույն վախ, երբեմն՝ սարսափ: Հետևաբար, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի հետ շփվելիս առանցքային է վերջիններիս ցույց տալ, վստահեցնել, որ իրենք ապահով և հուսալի են, մասնավորապես, անհրաժեշտ է ստեղծել վստահելի և ապահով մթնոլորտ ու միջավայր: Նախևառաջ, հարկ է օգնել նրանց՝ գտնել պաշտպանություն և հոգատարություն, ձեռք բերել վստահություն, իսկ որոշ դեպքերում՝ ինքնուրույնություն, որոնք անհրաժեշտ են վերջիններիս՝ իրենց ապահովությունը վերագտնելու առումով: Այսպիսով, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի մոտ վստահության մթնոլորտի ու միջավայրի ստեղծումն առաջին կարևոր քայլն է գործերի քննության ընթացքում:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհի հետ վստահելի հարաբերություններ հաստատելիս, պետք է նաև գիտակցել, որ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերը հաճախ ունեն գիտակցության և մտածողության այլ մակարդակ, քան այն մարդիկ, ովքեր փորձում են օգնել նրանց: Հասկանալը, որ այդ տարբերությունը կանդրադառնա մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհի վրա, թե ինչպես է տուժողը տեսնում քրեական վարույթում ներգրավված մասնագետների դերը, կօգնի ավելի հեշտ հասկանալ զոհին: Մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում իրականացնողները թիրախավորում և հավաքագրում են խոցելի անձանց, ովքեր բազմիցս մարգինալացվել են սեռի, ռասայի, կրոնի, էթնիկական պատկանելության, կրթության բացակայության, ֆինանսական խոցելիության, հաշմանդամության, քաղաքացիություն չունենալու և այլ պատճառներով: Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերը հաճախ հեշտ թիրախ են դառնում, քանի որ անտեսանելի են հասարակության համար կամ մերժված են հասարակության, երբեմն նաև՝ նրանց ընտանիքների կողմից: Ուստի զարմանալի չէ, որ երբ դատախազները, ոստիկանության ծառայողները, քննիչները կամ փաստաբանները փորձում են տեղեկություն ստանալ նրանցից, տուժողներն անմիջապես չեն արձագանքում կամ կասկածամտորեն են վերաբերում այդ մասնագետներին:

Դատախազները, ոստիկանության ծառայողները, քննիչները, փաստաբանները և դատավորները պետք է.

- ցուցաբերեն համբերատարություն, կարեկցանք և հոգատարություն,
- չհասցնեն տրավմաներ՝ «դասեր տալով» կամ դաստիարակելով,
- հասկանան, որ որոշակի գոյատևման վարքագիծը տրավմայի արդյունք է,
- տեղեկացված լինեն, թե բռնության պատճառով ինչ հոգեվիճակում է գտնվում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհը,
- արձագանքեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի հոգեկան առողջության արտակարգ խնդիրներին,

- ձեռնարկեն տրավմաների բուժման համար անհրաժեշտ գործողությունները կամ ուղղորդեն բուժման համար,
- գիտակցեն, որ հիշողության փոփոխությունները կարող են լինել տրավմայի արդյունք,
- ունակ լինեն տրամադրել համապատասխան մշակութային աջակցություն, եթե մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհի մշակութային առանձնահատկությունները տարբերվում են բնակիչների մեծամասնության մշակության հատկանիշներից,
- հասկանան և արձագանքեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհի վախերին,
- քաջալերեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերին՝ վերջիններիս ապագայի և գործի առնչությամբ որոշումներ կայացնելիս,
- հասկանան, թե ինչն է մոտիվացնում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհին,
- ստեղծեն առավելագույնս լավ հարաբերություն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհի հետ,
- ապահովեն գաղտնիությունը և վստահեցնեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհին՝ դրա գործնական պահպանման վերաբերյալ:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերը քննելու և քրեական հետապնդման ժամանակ զոհակենտրոն մոտեցման կիրառումն ունի բազմաթիվ առավելություններ:

Զոհակենտրոն մոտեցման կիրառումը կմեծացնի կայուն և ապահով վերապրող ունենալու հնարավորությունները, որոնք օգնում են գործի քննությանն ու հետապնդմանը: Կայուն վիճակում գտնվող ու բռնությունը վերապրած անձն ավելի ամբողջական է ցուցմունք տալիս ու կարողանում է ներկայացնել եղելությունը: Այն նաև կապահովի, որ տուժողների հետ հարցաքննություններն ավելի արդյունավետ լինեն՝ ավելացնելով իրավապահ մարմինների աշխատակիցների ու դատավորների

հետ համագործակցության հնարավորությունները: Երբ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի կարիքները բավարարվեն, ոստիկանության ծառայողները, քննիչները և դատավորները կարող են ավելի շատ տեղեկություններ ստանալ նրանցից և օգտագործել այդ տեղեկությունն ապացույցների ավելի կառուցվածքային որոնում կատարելու համար: Եթե լինեն հստակ և շատ ապացույցներ, դատախազի համար ավելի հեշտ կլինի ապացուցել հանցագործի մեղավորությունը դատարանում, իսկ դատավորի համար՝ որոշում կամ դատավճիռ կայացնել: Ամենակարևորն այն է, որ իրավական դրական արդյունքը կարող է լինել մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհի համար ամենասպասված և հատուցման ենթակա փորձը: Այն նաև կնպաստի, որ մարդու թրաֆիքինգ կամ շահագործում իրականացնողները ստանան հստակ պատգամ, որ իրավական համակարգը, որպես ամբողջություն, պարտավորվում է պաշտպանել համայնքի բոլոր անդամներին, հատկապես առավել խոցելի և անապահով խմբերի ներկայացուցիչների, և որ մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը չի հանդուրժվի:[11]

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց մասնակցությամբ քննչական կամ այլ վարութային գործողությունների ընթացքում, բացի օրենսդրությամբ նախատեսված պայմանների, անհրաժեշտ է՝

1) ապահովել քննչական կամ այլ վարութային գործողությունների իրականացումն օդափոխվող, բնական և արհեստական լուսավորության հնարավորություն ունեցող սենյակներում,

2) չծխել քննչական կամ այլ վարութային գործողությունների ընթացքում,

3) բացառել այլ անձանց ներկայությունը, ներառյալ՝ նույն հաստատությունում կամ մարմնում աշխատող այլ անձանց, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց, բացառությամբ կոնկրետ գործողությանն օրենքով մասնակցելու իրավունք ունեցող անձանցից,

[11] Մանրամասն տես՝ https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/Victim-Centered-Approach-to-Human-Trafficking-Cases-FINAL.pdf, վերջին անգամ դիտվել է 03.12.2022թ.-ին:

4) չզբաղվել քննչական կամ այլ վարութային գործողությանը չառնչվող գործողություններով (չպատասխանել հեռախոսազանգերի, չխաղալ հեռախոսով կամ համակարգչով, քրեական վարույթի հետ առնչություն չունեցող հարցերի վերաբերյալ քննարկումներ չկազմակերպել տուժողի կամ այլ մասնակիցների հետ և այլն),

5) պարզել տուժողի ֆիզիկական և ֆիզիոլոգիական վիճակը (առողջական վիճակը, քաղցած կամ ծարավ լինելը, անհանգստությունները կամ անհարմարությունները), որոնք կարող են դժվարացնել քննչական կամ այլ վարութային գործողության իրականացումը,

6) տեղեկացնել տուժողին քննչական կամ այլ վարութային գործողության մոտավոր կամ առավելագույն տևողությունը,

7) ստեղծել հնարավորություն, որ տուժողն ինքն ընտրի՝ թե որտեղ կարող է նստել քննչական կամ այլ վարութային գործողության ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փակ տարածությունում նստեցնել դեմքով դեպի դուռը:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հոգեբանական տրավման ու երկրորդային զոհականացումը

Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը հանցագործություն է, որը բազմաթիվ հետևանքներ է թողնում անձի ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեկան առողջության վրա: Հարկավոր է ընդգծել, որ մարդու թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձն առնչվում է բազմաշերտ խնդիրների՝ պահման վատթարագույն պայմաններից մինչև բռնության տարբեր ձևերի ենթարկվելը, որոնք էլ իրենց հերթին տարբեր կերպ են ազդում անձի հոգեկան առողջության վրա: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ հոգեկան առողջությունը դիտարկվում է որպես «շարունակական գործընթաց» ու կարող է ունենալ տարբեր բաղադրիչներ և դրսևորումներ: Հոգեկան առողջություն հասկացության մեջ ներառվող հիմնական բաղադրիչներն են՝

1) հոգեկան բարեկեցությունը,
2) ինքնավարությունը,
3) ինքնաիրականացումը:

Հատկապես սահմանման մեջ մատնանշվում է, որ հոգեկան առողջությունը պետք է ավելի լայն դիտարկել, քան պարզապես հոգեկան խանգարումների բացակայությունը[12]:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հոգեկան առողջությանն անդրադառնալիս, երբ վերջինները ստիպված են պարբերաբար իրենց արժեքային համակարգին դեմ գործողություններ կատարել, կարելի է դիտարկել ինքնավերաբերմունքի և ինքնաընկալման խնդիրներ, որոնք մեծ ազդեցություն են ունենում հոգեբանական տրավմայի առաջացման ու դրա տևողության վրա:

---

[12] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.who.int/news-room/fact-sheets/detail/mental-health-strengthening-our-response, վերջին անգամ դիտվել է 07.02.2023թ.-ին:

Տրավմատիկ են համարվում այն իրադարձությունները, որոնք գերազանցում են օրգանիզմի հարմարման սովորական կարողություններին և մարդու կյանքի ու ֆիզիկական ամբողջականության համար վտանգ են պարունակում: Հոգեբանական տրավմայի առաջացմանը հանգեցնող կամ հավանականորեն հանգեցնող առավել տարածված իրադարձություններ են համարվում՝ սեռական բռնությունը, պատերազմը, մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը և այլ ճգնաժամային իրադարձություններ:[13] Հարկավոր է ընդգծել, որ անհանգստությունը, տագնապայնությունը, գերզգոնությունը, տրամադրության փոփոխությունները նորմալ արձագանքներ են «ոչ նորմալ» իրավիճակին և մասնագետները կարող են հոգեբանական տրավմայի մասին խոսել միայն այն պարագայում, երբ ախտանիշները երկարաձգվել են և խոչընդոտում են անձի նորմալ կենսագործունեությանը:

Բազմաթիվ փոխազդող սոցիալական, հոգեբանական և կենսաբանական գործոններ իրենց ազդեցությունն են ունենում հոգեբանական տրավմայի առաջացման և դրսևորման վրա, ինչը կարևոր է հաշվի առնել աջակցության կազմակերպման ընթացքում. օրինակ, հոգեբանական տրավմայի դրսևորման և շարունակականության վրա ազդեցություն ունեցող երկու հիմնական գործոններ կան՝ իրադարձության անկանխատեսելիությունն և անվերահսկելիությունը, որոնք, ինչպես գիտենք, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման կարևոր բաղադրիչներ են:

Այսպես, հոգեկան առողջության վրա ազդող սոցիալական, հոգեբանական և կենսաբանական գործոնները մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքում բազմաթիվ են՝ տրավմայի կամ բռնության փորձ մինչև թրաֆիքինգի ենթարկվելը կամ շահագործվելը, շահագործման տևողությունը, կիրառված բռնությունների դրսևորման առանձնահատկությունները և շարունակականությունը, տեղաշարժման սահմանափակումները շահագործման ընթացքում, չբավարարված պահանջմունքերի

[13] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ Trauma | APS (psychology.org.au), վերջին անգամ դիտվել է 07.02.2022թ.-ին:

քանակը, մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկվելուց հետո աջակցության բացակայությունը կամ ոչ նպատակային լինելը[14]:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հոգեբանական տրավման ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք տարբեր են, օրինակ բռնության ենթարկված կամ պատերազմի մասնակցած զինծառայողների հոգեբանական տրավմայից: Հետազոտությունները ցույց են տալիս, որ թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց մոտ հոգեբանական տրավմայի հետ կապված բազմաթիվ հետևանքներ են դիտարկվում առավելապես *ինքնության* և *հարաբերությունների* ոլորտներում: Ինքնության հետ կապված հիմնական հիմնախնդիրները դիտվում են ինքնաընդունման դժվարություններից մինչև կրկնվող տագնապային զգացողությունը, «որ վտանգը դեռ իր հետ է, նույնիսկ, երբ ինքն անվտանգ վայրում է»: Հարաբերությունների խնդիրները կարելի է դիտարկել տրավմատիկ կապվածությունից մինչև թշնամանքի և զայրույթի արտահայտում հարաբերություններում:[15]

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման պարագայում անձը ենթարկվում է պարբերաբար կրկնվող, տարբեր տեսակների բռնությունների և միաժամանակյա այլ բացասական գործոնների, ինչը մեծացնում է հոգեբանական տրավմայի առաջացման հավանականությունը և հայտնի է համալիր կամ բարդ տրավմա եզրույթով, և մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պարագայում հաճախ մատնանշվում է հենց բարդ տրավմայի մասին:[16]

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման հետևանքով առաջացող հոգեբանական տրավմայի ցուցիչները կարող են կարճատև ու երկարատև լինել, և դրանց մասին իրազեկված լինելը, հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ

---

[14] Devine S. Psychosocial and Mental Health Service Provision for Survivors of Trafficking International Organization for Migration (IOM), 2009, էջեր 10-11:

[15] Նույն տեղում, էջ 8

[16] Chambers R., Gibson M., Chaffin S., Takagi T., Nguyen N., Mears-Clark T. Trauma-coerced Attachment and Complex PTSD: Informed Care for Survivors of Human Trafficking, Journal of Human Trafficking, 2002, էջ 2:

աջակցություն կազմակերպել: Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման հնարավոր հոգեբանական հետևանքներ են՝ դեպրեսիան, տագնապային խանգարումները՝ այդ թվում խուճապային գրոհները, Հետտրավմատիկ սթրեսային խանգարումը, տարբեր նյութերի և ալկոհոլի չարաշահումը, ամոթն ու մեղքի զգացումը, մեկուսացումը, ինքնասպանության մտքերն ու փորձերը, ինքնաընկալման հետ կապված խնդիրները[17], որոնց անդրադարձ կկատարենք հաջորդ՝ «Հոգեբանական տրավմայի նկարագրությունը, ցուցիչները և դրսևորման առանձնահատկությունները» ենթագլխում:

Մարդու թրաֆիքինգ կամ շահագործում վերապրած անձանց հոգեբանական տրավման կարող է բացասական ազդեցություն ունենալ ընտանիքի անդամների, մասնավորապես՝ երեխաների վրա ևս:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու հետևանքով անձի մոտ կարող են առաջանալ հոգեկան առողջության տարբեր փոփոխություններ և խնդիրներ: Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պարագայում առավել հաճախ խոսվում է հոգեբանական տրավմայի առաջացման մասին, որը, իր հերթին, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման պարագայում ունի մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես՝ մատնանշվում է առավելապես բարդ կամ համալիր տրավմայի մասին և տրավմատիկ փորձն ազդեցություն է ունենում հատկապես անձի ինքնաընկալման և հարաբերությունների վրա:[18]

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց համար հոգեկան առողջության ազդեցություններն առանձնացնելու համար անհրաժեշտ է

---

[17] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5618827/, վերջին անգամ դիտվել է 03.12.2022թ.-ին:

[18] Մանրամասն տես՝ Թումասյան Դ., Վիրապյան Է., Դավթյան Ս. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանությունն ու աջակցությունը. Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար. Երևան, 2022: Վերը նշված ձեռնարկը մշակվել է ԱՄՆ պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընալ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2021 թվականի հուլիսից իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում:

հաշվի առնել, որ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման յուրաքանչյուր փուլ տարբեր հետևանքներ կարող է ունենալ. կանայք, տղամարդիկ, երեխաները կարող են բախվել տարբեր հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բռնությունների, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ ալկոհոլի հարկադրված օգտագործմանը, սոցիալական սահմանափակումների, մանիպուլյացիաների և նույնիսկ մարդկանց թրաֆիքինգից կամ շահագործումից ձերբազատվելուց հետո կարող են որոշ ռիսկեր պահպանվել, ուստի յուրաքանչյուր փուլն իր հոգեբանական առանձնահատկություններն ու դրսևորումներն ունի:

Հոգեբանական տրավմայի հետևանքները, կարող են դրսևորվել թե՛ հուզական, թե՛ վարքային և թե՛ կոգնիտիվ մակարդակներում:

Այսպես, Աղյուսակ 1-ում կարելի է դիտել մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տարբեր գործընթացներն ու դրանց ազդեցությունը հոգեկան առողջության վրա:

Աղյուսակ 1.

Թրաֆիքինգի և շահագործման փուլեր	Գործողություններ	Ազդեցությունը/ հետևանքը հոգեկան առողջության վրա
✓ **Հավաքագրել** ✓ **Տեղափոխել** ✓ **Փոխանցել** ✓ **Ստանալ** ✓ **Թաքցնել**	✓ փաստաթղթերի կեղծում ✓ առգրավում ✓ առևանգում ✓ խաբեություն ✓ դիրքի չարաշահում ✓ բռնություն	✓ ամոթ ✓ վախ ✓ մեղքի զգացում ✓ շփոթություն ✓ անապահովության զգացում ✓ տագնապ ✓ անհանգստություն

		✓ անվստահություն
✓ **Շահագործել** ✓ **Շահագործման վիճակի մեջ դնել** ✓ **Շահագործման վիճակում պահել**	✓ սպառնալիքի գործադրում ✓ բռնության կիրառում ✓ հարկադրանքի այլ միջոցների կիրառում ✓ խոցելիության շահարկում	✓ վախ ✓ ամոթ ✓ ապաթիա ✓ տագնապ ✓ անօգնականություն ✓ տրավմատիկ կապվածության ձևավորում ✓ սպառվածություն
✓ **Վերասոցիալականացում**	✓ Աջակցության կազմակերպում ✓ Տեղափոխում անվտանգ միջավայր ✓ Համայնքի հետ կապի վերահաստատում	✓ խարան, ✓ ամոթ ✓ մեղքի զգացում ✓ մեկուսացում ✓ գերգրգռվածություն ✓ հիշողության և ուշադրության կենտրոնացման հետ կապված խնդիրներ ինքնաընդունման հետ կապված խնդիրներ

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի հիմնական *հուզական* արձագանքները հետևյալն են՝ վախ, տագնապ, տառապանք, դեպրեսիա, ամոթ, մեղքի զգացում և ապատիա:

Անդրադառնալով հաճախ հանդիպող *կոգնիտիվ* ախտանիշներին՝ առանձնացնենք հատկապես կրկնողության համախտանիշը և իրավիճակը նորից վերապրելու զգացողությունը, որոնք դրսևորվում են հիմնականում հիշողության

«առկայծումներով» կամ ֆլեշբեքերով (մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձն այնպիսի զգացողություն է ունենում, կամ այնպիսի վարք է ցուցաբերում, ասես տրավմատիկ իրողությունը հենց այդ պահին է կատարվում). հիմնականում տեսողական «առկայծումների» տեսքով, բայց կարող են լինել նաև հոտառական կամ լսողական առկայծումներ: Հաճախ հանդիպում են հիշողության խնդիրներ՝ տրավմատիկ ամնեզիա, երբ անձը չի հիշում դեպքի հետ կապված մանրամասներ կամ ամբողջությամբ կատարվածը, տրավմատիկ հիպերմնեզիա՝ ամեն ինչ հիշել ամենայն մանրամասնությամբ, դետալներով: Մյուս տարածված ախտանիշը դիսոցացիան է[19]: Առավել տարածված ախտանիշներից է նաև շփոթվածությունը, որը հիմնականում դրսևորվում է ուշադրության կենտրոնացման դժվարություններով և տարածական կողմնորոշման խնդիրներով, տարրական գործողություններ կատարելու դժվարություններով:

Վարքային ախտանիշներն են՝ խուսափողական վարքը ցանկացած գրգռիչից, որը կարող է հիշեցնել տրավմատիկ իրողության մասին, գերգրգռվածությունը՝ անընդհատ վտանգի սպասումով, քնի խանգարումները, սնունդ ընդունելու խանգարումները, կախվածությունն ալկոհոլից կամ այլ նյութերից, դեղերի և թմրանյութերի չարաշահումը, հիգիենայի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը՝ անընդհատ լվացվելու ցանկություն կամ հակառակը, հիգիենային չհետևելը, միջանձնային հարաբերություններում խնդիրները, ինքնավնասման փորձերը, ինքնասպանության փորձերը, անհիմն ծիծաղը կամ լացը, հատկապես բացասական հույզերի հետ կապված պատմություններ պատմելիս:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց մոտ հաճախ հանդիպում են նաև ֆիզիոլոգիական խնդիրներ, որոնք չունեն ոչ մի ֆունկցիոնալ

[19] Դիսոցացիան անձագանք է տրավմատիկ իրողությանը, որի առավել տարածված դրսևորումներն են դեպերսոնալիզացիան՝ դրսևորվում է սեփական անձի ընկալման աղճատման ձևով. որոշ անձինք նշում են, որ իրենց մարմնից կարծես առանձնացված լինեն, կողքից են տեսնում իրավիճակը, դեռեալիզացիան՝ շրջապատող իրականության ընկալման խնդիրներ՝ իր շուրջն առկա իրերի կամ մարդկանց որպես օտարի կամ անծանոթի ընկալում:

հիմք, օրինակ՝ ցավեր մարմնի տարբեր հատվածներում, մկանային ցավեր, գլխացավեր, նեյրովեգետատիվ ռեակցիաներ՝ սրտխփոց, դժվարացած շնչառություն, առատ քրտնարտադրություն, սեռական դիսֆունկցիաներ (հատկապես սեռական շահագործման ենթարկված լինելու դեպքում)՝ սեռական ցանկության բացակայություն կամ անկում, սեռական ցանկության ակտիվացում, կոնվերսիոն խանգարումներ՝ ձեռքի մկանների անշարժացում, խոսելու անկարողություն, կուրություն: Կարող են դիտվել նաև սոմատիկ խնդիրներ՝ աղեստամոքսային համակարգի, սրտանոթային համակարգի՝ ճնշման տատանումներ, շնչառական համակարգի՝ շնչարգելություն, մաշկային՝ էկզեմա, ալերգիկ ցան, էնդոկրին համակարգի խանգարումներ:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հնարավոր հոգեբանական հետևանքները ներառում են.[20]

1) իրերի նկատմամբ հետաքրքրության կորուստ կամ ապագան պլանավորելու անկարողություն,

2) անքնություն, քնի խանգարումներ, մղձավանջներ,

3) ուտելու խանգարումներ,

4) շարունակական հոգնածություն, սպառվածություն,

5) մեղքի զգացում, ամոթ, ինքնամեղադրանք,

6) մենակության վախ,

7) կպչուն գործողություններ և մտքեր,

8) դեպրեսիա[21],

9) տագնապային խանգարումներ, ներառյալ խուճապային գրոհներ[22],

---

[20] Հարկ է նշել, որ վերը նշված ախտանիշներն անհատական բնույթ են կրում:

[21] Դեպրեսիան ախտորոշում է, որի դեպքում տրամադրության և ինքնազգացումի անկումից բացի, դիտվում է մտածողության դանդաղում, ուշադրության անկայունություն, շարժումների դանդաղում (արգելակում), ինքնագնահատականի անկում, հյուծվածություն: Անձը կորցնում է հետաքրքրությունը, ինքնավստահությունը, խանգարվում է քունը: Առաջանում է մեղքի և մեղավորության զգացում, ինչը կարող է ինքնասպանության հանգեցնել:

[22] Տագնապային խանգարումները հոգեկան առողջության խնդիրներ են, որոնց բնորոշ են անհանգստության և վախի զգացումներ: Անհանգստությունն ապագա իրադարձությունների

10) թմրանյութերի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ ալկոհոլի չարաշահում,

11) մեկուսացում, օտարվածության զգացողություն,

12) ինքնասպանության մտքեր և փորձ,

13) դիսոցիատիվ խանգարում,

14) «Ստոկհոլմյան համախտանիշ» կամ տրավմատիկ կապվածության (թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց առնչությամբ հաճախ խոսվում է տրավմատիկ կապվածության մասին, սակայն, կարևոր է ընդգծել, որ թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված ոչ բոլոր անձանց մոտ է եղել տրավմատիկ կապվածություն և հիմնականում հետազոտությունները կենտրոնացած են կանանց, աղջիկների սեռական շահագործման օրինակների վրա: Այնուամենայնիվ, ապացուցված է, որ թրաֆիքինգ կատարող անձինք կամ շահագործողները նպատակային, օգտագործում են «պարգևների – պատիժների» շրջափուլը հուզական կապվածություն ստեղծելու նպատակով՝ պաշտպանելով, վերահսկելով, պատժելով, հոգ տանելով),

15) Հետտրավմատիկ սթրեսային խանգարում (այսուհետ նաև՝ ՀՏՍԽ): ՀՏՍԽ-ն, ըստ DSM-5-ի[23], ունի մի շարք հիմնական ցուցիչներ՝ որևէ տեսակի տրավմատիկ փորձի առկայություն, կրկնվող հիշողությունների առկայծում, խուսափում տրավմա հիշեցնող գործոններից և իրավիճակներից, բացասական փոփոխություններ կոգնիտիվ մակարդակում և տրամադրությունում, գերգրգռվածություն, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ունի իր ախտանիշները և մեկ ամսից ավել կրկնվելու, անձի

նկատմամբ արձագանքն է, իսկ վախը՝ ներկա իրադարձությունների: Այս զգացումները կարող են առաջացնել ֆիզիկական ախտանիշներ, ինչպես օրինակ՝ սրտխփոց, դող և այլն:

[23] DSM-5 կամ The Diagnostic and Statistical Manual of Mental Disorders, Fifth Edition- Հոգեկան խանգարումների ախտորոշման և վիճակագրության ձեռնարկն ուղղված կլինիկական մասնագետներին, հոգեբույժներին սահմանել և դասակարգել հոգեկան խանգարումները, որոնք կարող են բարելավել ախտորոշումները, բուժումը և հետազոտությունները:

հարմարման վրա ազդեցություն ունենալու պարագայում կարող ենք խոսել ՀՏՍԽ-ի առկայության մասին:[24]

Այսպես, փորձելով ներկայացնել հոգեբանական հետևանքների ազդեցությունն անձի հոգեկան առողջության վրա, անդրադարձ կատարենք մի հետազոտության, ըստ որի, վերաինտեգրման և վերականգնողական ծրագրերի մեջ ընդգրկված 200 կանանցից 95%-ը դեպրեսիայի որևէ ցուցիչ է ունեցել, 38%-ը նշել է ինքնասպանության մտքերի մասին և 56%-ը ՀՏՍԽ բազմաթիվ ախտանիշներ է ունեցել:[25]

Ցավոք, երբեմն մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերը հայտնաբերելուց հետո, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի տրավմատիզացիան չի նվազում, իսկ որոշ դեպքերում՝ ավելի է ուժգնանում՝ սխալ վերաբերմունքի, մոտեցումների, ոչ զգայուն վարքագծի արդյունքում:

Ինչպես նշվել է, մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը մեծ ազդեցություն է ունենում անձի վրա թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական մակարդակներում: Սա նշանակում է, որ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձը կարող է տարբեր մարմիններին ու կազմակերպություններին դիմել, օրինակ՝ առողջապահական, հոգեկան առողջության կենտրոններ՝ աջակցություն ստանալու նպատակով: Եվ ցավոք, ամբողջ աշխարհում, այդ թվում՝ ՀՀ-ում, թրաֆիքինգի կամ

[24]Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://growfreetn.org/2020/07/28/psychological-effects-of-human-trafficking-depression-anxiety-substance-use-part-1/, https://growfreetn.org/2020/07/28/psychological-effects-of-human-trafficking-shame-isolation-loss-of-self-part-2/, https://awkolaw.com/no-escape-the-enduring-effects-of-trauma-on-the-emotional-health-of-human-trafficking-survivors/, վերջին անգամ դիտվել է 03.12.2022թ.-ին:

[25] Zimmerman C., Hossain M., Yun K., Roche B., Morison L. and Watts Ch. Stolen smiles: The physical and psychological health consequences of women and adolescents trafficked in Europe, The London School of Hygiene & Tropical Medicine, 2006, էջեր 75-113: Մանրամասն տես՝ Թումասյան Դ., Վիրապյան Է., Դավթյան Ս. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանությունն ու աջակցությունը. Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար. Երևան, 2022: Վերը նշված ձեռնարկը մշակվել է ԱՄՆ պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2021 թվականի հուլիսից իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում:

շահագործման ենթարկված անձին «երկրորդային զոհականացնելու» հավանականությունը շատ մեծ է:

Երկրորդային զոհականացումը զոհականացման այն տեսակն է, որը կապված է ծառայություն մատուցող մարմինների, կազմակերպությունների կամ անհատների՝ կատարվածին արձագանքի, այլ ոչ թե անմիջականորեն բռնության դեպքի հետ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երկրորդային զոհականացումն առավելապես կապված է արդարադատության և իրավապահ մարմինների համակարգում առկա խնդիրների հետ: Համայնքը ևս կարող է նպաստել երկրորդային զոհականացման առաջացմանը, և առաջացման գործոնները պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում համայնքի էթնիկ, ռասայական, կրոնական պատկերացումների հետ և հետևաբար կանխարգելման գործողությունները ենթադրում են համապատասխան ռազմավարությունների մշակում:[26] Հետազոտությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեն երկրորդային զոհականացման առաջացման երեք հիմնական պատճառներ՝

1) մարդու թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ կարծրատիպեր,

2) մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին ծառայություն մատուցող կամ դեպքի հետ առնչվող անձանց գործողությունների մասին պատկերացումներ, օրինակ՝ հնարավոր սեռավարակներից խուսափելու համար համապատասխան և համապարփակ հետազոտությունների իրականացման ուղղորդում, կամ մարդկանց թրաֆիքիգնի կամ շահագործման հետագա կանխարգելման անհրաժեշտ քայլերի բացատրում և այլն:

3) մատուցված ծառայությունների անարդյունավետություն, որը հաճախ բարդացնում է հոգեբանական վիճակը և պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում նրանց կյանքի որակի և ինքնազգացողության հետ:[27]

---

[26] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.stopvaw.org/secondary_victimization, վերջին անգամ դիտվել է 03.12.2022թ.-ին:

[27] Campbell R. The community response to rape victims' experiences with legal, medical and mental health systems// American Journal of Community Psychology, 1998, Vol. 26, No 3, էջեր 355-378: Մանրամասն

Երկրորդային զոհականացման իրավիճակներ են համարվում՝

- **Անհարկի այնպիսի հարցեր տալը, որոնք կապված չեն հանցագործության հետ:** Օրինակ՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին հարցնել իր պահվածքի մասին կամ ինչու չի կարողացել պաշտպանել իրեն: Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձը մեղավոր չէ, որ նա տուժել է որևէ հանցագործությունից, ուստի նա չպետք է զգա, թե իրեն մեղադրում են կատարվածի համար:

- **Կրկնակի (բազմակի) հարցաքննություններ:** Հաճախ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձինք մի քանի անգամ կրկնում են իրենց ցուցմունքները նախաքննության և դատաքննության փուլերում և տարբեր անձանց մասնակցությամբ: Նույն հանգամանքների վերաբերյալ կրկնակի (բազմակի) հարցաքննությունն արդյունավետ չէ և մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի համար կարող է լինել նյարդայնացնող, անհարգալից և տրավմասիկ:

- **Դատավարության անհարկի ձգձգումներ:** Գործնականում հաճախ քննչական գործողությունները կամ դատավարությունը հետաձգելու կամ տեղափոխելու կարիք է առաջանում: Ամեն հետաձգման դեպքում, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձը, ով պատրաստ է մասնակցել քննչական գործողությանը կամ դատական նիստին, կարող է իրեն հիասթափված կամ խաբված զգալ՝ առավել ևս անորոշության պայմաններում: Հետևաբար, կարևոր է հայտարարել հետաձգման յուրաքանչյուր դեպքի մասին:

տես՝ Թումասյան Դ., Վիրապյան Է., Դավթյան Ս. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանությունն ու աջակցությունը. Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար. Երևան, 2022: Վերը նշված ձեռնարկը մշակվել է ԱՄՆ պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընալ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2021 թվականի հուլիսից իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում:

- **Հաղորդակցման և տեղեկատվության խափանում:** Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձինք ակնկալում են հարգանք իրենց նկատմամբ, որը պետք է դրսևորվի նրա հետ հաղորդակցման ու տեղեկատվության տրամադրման դեպքում: Սա առավել ակնհայտ է այն դեպքում, երբ նրանց հետ հաղորդակցումը պատշաճ չի իրականացվում, տեղեկատվությունն ամբողջական և ժամանակին չի տրամադրվում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին՝ անգամ այն դեպքում, երբ դատավարությունն ավարտվում է մեղադրական դատավճռով և հիմնավորվում է մարդու թրաֆիքինգի կամ շահագործման կատարելու փաստը:[28]

Համապատասխան մոտեցումները պետք է կիրառելի լինեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի մասնակցությամբ ցանկացած քննչական գործողություն իրականացնելիս: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի համաձայն՝ քննչական գործողություններն են՝

1) հարցաքննությունը.

2) առերեսումը.

3) ցուցմունքը տեղում ստուգելը.

4) զննումը.

5) քննումը.

6) փորձարարությունը.

7) ճանաչումը.

8) տեղեկատվության պահանջը.

9) առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը.

10) խուզարկությունը.

11) առգրավումը.

12) արտաշիրմումը:

---

[28] Մանրամասն տես՝ Սեռական հանցագործությունների քննության առանձնահատկությունները. Մեթոդական ուղեցույց. Երևան, 2021; Թումասյան Դ. Տուժողի կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում (դասընթաց դատավորների, դատավորների թեկնածուների և դատական ծառայողների համար): Երևան, 2020, էջեր 93-94:

Չնայած մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով նախաձեռնցված քրեական վարույթներով տուժողը կարող է մասնակցել վերը նշված բոլոր քննչական գործողություններին, սակայն առավել արդիական ու կարևոր են հարցաքննությունների ու առերեսումների իրականացման հատուկ մոտեցումների, մեթոդների ու տակտիկաների ներկայացումը:

Յուրաքանչյուր հարցաքննվող պետք է հարցաքննվի այլ հարցաքննվողներից անջատ: Ավելին, քննիչը պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի նույն վարույթի շրջանակներում հարցաքննության ենթակա անձինք մինչև հարցաքննության ավարտը հաղորդակցություն չունենան միմյանց հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել է, որ, եթե վկան կամ տուժողը հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, ապա փաստաբանն իրավունք ունի մասնակցելու հարցաքննությանը և քննիչի ներկայությամբ կարճատև խորհրդատվություն տալու վկային նրա կարգավիճակին վերաբերող հարցերով: Փաստաբանը վկային կամ տուժողին հարցեր է տալիս միայն քննիչի թույլտվությամբ և իրավունք չունի մեկնաբանելու նրա պատասխանները:

Ցանկացած հարցաքննություն արձանագրվում է, հարցաքննվող անձի ցուցմունքներն արձանագրվում են առաջին դեմքով և, հնարավորության սահմաններում, **բառացի**: Հարցերը և դրանց պատասխաններն արձանագրվում են նույն հաջորդականությամբ, ինչ որ տրվել են հարցաքննության ընթացքում: Եթե հարցաքննության ընթացքում հարցաքննվող անձին ներկայացվում են իրեղեն ապացույցներ կամ արտավարութային փաստաթղթեր, կամ հրապարակվում են ապացուցողական այլ գործողությունների արձանագրություններ, կամ վերարտադրվում են ձայնագրման, տեսագրման կամ տեսաձայնագրման նյութեր, ապա այդ մասին **նշվում է արձանագրությունում**: Եթե հարցաքննության ընթացքում հարցաքննվողի կողմից կատարվել են նշումներ, կազմվել են սխեմաներ, գծագրեր, նկարներ, ապա դրանք հարցաքննվողի ստորագրությամբ կցվում են արձանագրությանը, և այդ մասին նշվում է արձանագրությունում:

Հարցաքննության ավարտից հետո արձանագրությունը ներկայացվում է հարցաքննվող անձի և հարցաքննության մյուս մասնակիցների ծանոթացմանը, կամ նրանց խնդրանքով արձանագրությունը հրապարակում է քննիչը, որի մասին նշվում է արձանագրությունում: Արձանագրությունը լրացնելու կամ դրանում ուղղումներ կատարելու վերաբերյալ հայտարարությունները շարադրվում են արձանագրության մեջ:

Ցուցմունքին ծանոթանալու և դրանում առկա գրառումների ճշտության փաստը հարցաքննվող անձը և հարցաքննության մյուս մասնակիցները հավաստում են ստորագրությամբ, որը դրվում է արձանագրության վերջում:[29]

Հարցաքննության տեսաձայնագրման դեպքում ցուցմունքները, այդ թվում՝ հարցերը և պատասխանները, ինչպես նաև հարցաքննության ընթացքում կատարված մյուս գործողություններն **ամրագրվում են միայն տեսաձայնագրմամբ:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քննչական գործողությունները (բացառությամբ տեղեկատվության պահանջի և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու) պարտադիր տեսաձայնագրվում են, բացառությամբ երբ դա օբյեկտիվորեն անհնար է: Տեսաձայնագրումը պետք է իրականացվի քննչական գործողությունը սկսելու պահից մինչև դրա ավարտը, առանց ընդհատման, բացառությամբ անկանխատեսելի տեխնիկական անսարքության կամ օբյեկտիվ անհնարինության այլ դեպքերի: Տեսաձայնագրման ընդհատման դեպքում քննչական գործողության կատարումն ընդհատվում է, որի պատճառները նշվում են այդ նպատակով կազմվող առանձին արձանագրությունում: Քննչական գործողության կատարումը շարունակվում է տեսաձայնագրումը վերսկսելու պահից: Մինչ այդ քննիչը միջոցներ է ձեռնարկում քննչական գործողության բնականոն ընթացքը և արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ: Տեսաձայնագրման դեպքում ապահովվում են քննչական գործողության

[29] Հարցաքննվող անձն ստորագրում է նաև արձանագրության յուրաքանչյուր էջի տեքստի վերջում:

ընթացքի ամբողջականությունը, տեսանելիությունը (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) և լսելիությունը: Տեսաձայնագրությունը չի կարող մոնտաժվել կամ այլ կերպ փոփոխվել:

Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ 4 ժամից ավելի, իսկ անչափահասի[30], ինչպես նաև հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի հարցաքննությունը՝ 2 ժամից ավելի: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 8, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձի համար՝ 6 ժամը:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով քրեական վարույթների ընթացքում հարցաքննության և այլ քննչական գործողությունների մասնակիցները պետք է կիրառեն հետևյալ կանոնները՝

1) հարցաքննության ողջ ընթացքում լինել հանգիստ, առնվազն դրսևորել հանդարտ վարքագիծ,

2) չկատարեն մարմնի այնպիսի շարժումներ, որոնք բացասական վերաբերմունք են արտահայտում,

3) ներկայանան կամ քննիչը ներկայացնի հարցաքննությանը ներկա գտնվող այլ անձանց և բացատրի նրանց գործողությունները,

4) քննիչը հայտնի հարցաքննության անցկացման պատճառների մասին՝ օգտագործելով տուժողի համար հասկանալի բառեր և արտահայտություններ՝ չնսեմացնելով վերջինիս պատիվն ու արժանապատվությունը և չօգտագործելով կարծրատիպային արտահայտություններ կամ պիտակավորումներ,

[30] Սույն մեթոդբանությունում «անչափահաս» և «երեխա» եզրույթները կիրառվում են որպես հոմանիշներ՝ կիրառելով տարբեր իրավական ակտերում կիրառվող եզրույները:

5) չդատապարտեն կամ որևէ դժգոհություն չարտահայտեն, երբ տուժողը պատմում է տեղի ունեցածի մասին,

6) չընդհատեն տուժողին, բացառությամբ՝ նրա ասածը ճշտելու նպատակով, չտա հուշող հարցեր,

7) չտան միաժամանակ մի քանի հարցեր, առաջին հարցի պատասխանը ստանալուց հետո անցնի հաջորդ հարցին,

8) չտան «ինչո՞ւ»-ով սկսվող հարցեր, քանի որ դրանք կարող են առաջացնել մեղավորության զգացում,

9) չձևակերպեն հարցերն այնպես, որ օգտագործվի կրավորական սեռը, այլ կիրառեն միայն ներգործական սեռը,

10)չտան խոստումներ, որոնց իրականացումն այդ մասնակցի լիազորություններից դուրս են կամ վերահսկելի չեն,

11)չկիրառեն բազմիմաստ կամ հռետորական հարցեր, կրկնակի ժխտումներ,

12) թույլատրեն տուժողին տալ կարևոր թվացող ցանկացած հարց և մեկնաբանություն:[31]

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է ցուցմունքի դատական դեպոնացման ինստիտուտը[32], որը կատարվում է դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում պատշաճ ապացուցումն ապահովելու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ: Ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը պետք է բովանդակի դրա անհրաժեշտության հիմնավորումները, ինչպես նաև վարույթի այն մասնակիցների մասին տվյալներ, որոնց մասնակցությունն անհրաժեշտ է դեպոնացմանը: Միջնորդությունը ներկայացնողը դրան կցում է իր տիրապետման ներքո գտնվող բոլոր այն նյութերը, որոնք դեպոնացման մասնակիցներին հնարավորություն կտան պատշաճորեն իրականացնելու հակընդդեմ հարցման իրավունքը: Դատարանը որոշմամբ մերժում է ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը, եթե այն հիմնավորված չէ, կամ դրա հիմնավորումները համոզիչ չեն:

[31] Սեռական հանցագործությունների քննության առանձնահատկությունները. Մեթոդական ուղեցույց. Երևան, 2021, էջեր 61-62:

[32] Ցուցմունքի դատական դեպոնացումը կատարվում է դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում պատշաճ ապացուցումն ապահովելու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ: Ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը պետք է բովանդակի դրա անհրաժեշտության հիմնավորումները, ինչպես նաև վարույթի այն մասնակիցների մասին տվյալներ, որոնց մասնակցությունն անհրաժեշտ է դեպոնացմանը: Միջնորդությունը ներկայացնողը դրան կցում է իր տիրապետման ներքո գտնվող բոլոր այն նյութերը, որոնք դեպոնացման մասնակիցներին հնարավորություն կտան պատշաճորեն իրականացնելու հակընդդեմ հարցման իրավունքը: Դատարանը որոշմամբ մերժում է ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը, եթե այն հիմնավորված չէ, կամ դրա հիմնավորումները համոզիչ չեն:

ապացուցումն ապահովելու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ: Այն կարող է կիրառվել օրինակ օտարերկրյա քաղաքացի զոհերի նկատմամբ, ովքեր ցանկություն են հայտնել մեկնել ՀՀ-ից ու դատաքննության փուլում հավանական է, որ չլինեն ՀՀ-ում:[33]

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ քրեական վարույթների ընթացքում անհրաժեշտ է՝

1) արդյունավետորեն քննել մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթադրյալ բոլոր դեպքերը և դրվագները,

2) հարգել յուրաքանչյուր տուժողի իրավունքները և կարիքները, հաշվի առնել տուժողի առանձնահատկությունները,

3) միջոցներ ձեռնարկել մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողներին օժանդակելու և պաշտպանելու ուղղությամբ՝ հասարակական կազմակերպությունների հետ,

4) տուժողի նկատմամբ դրսևորել զոհակենտրոն, իսկ եթե տուժողը 18 տարին չլրացած անձ է՝ նաև երեխայակենտրոն մոտեցում:

[33] Մանրամասն տես՝ Թումասյան Դ., Վիրապյան Է., Դավթյան Ս. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանությունն ու աջակցությունը. Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար. Երևան, 2022: Վերը նշված ձեռնարկը մշակվել է ԱՄՆ պետքարտուղարության կողմից ֆինանսավորվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2021 թվականի հուլիսից իրականացվող «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում:

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հետ զոհակենտրոն և երեխայակենտրոն մոտեցումները

Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը տարբերվում է բազմաթիվ այլ հանցագործություններից և ներառում է մարդու իրավունքների կոպիտ խախտումներ, որոնք սովորաբար չեն դրսևորվում միայն մեկ, կարճաժամկետ հանցավոր գործողությամբ և հետևաբար մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի պարագայում գործ ունենք բարդ, շղթայական բռնությունների և շահագործումների հետ, ինչն էլ իր հերթին ազդում է կյանքի բոլոր ոլորտների վրա՝ հոգեբանական, ֆիզիկական, սոցիալական: Հոգեբանական տրավմայի դրսևորումների մասին տեղեկացված լինելը և անձի հոգեբանական բարեկեցությունը, կարիքները կարևորելու պարագայում մեծանում է հավանականությունն աջակցության գործընթացը հաջողելու: Այսպես, միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ զոհակենտրոն կամ վերապրածակենտրոն մոտեցմամբ աշխատող մասնագետները՝ դատախազներ, ոստիկանության ծառայողներ, քննիչներ, փաստաբաններ, դատավորներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն, ավելի մեծ հավանականություն ունեն գործի բազմակողմանի ճանաչման կամ ապացույցների հավաքագրման, քանի որ ավելի շատ տեղեկություններ ունեն քննվող գործի փաստերի մասին, ինչն էլ իր հերթին հիմնված է վստահելի փոխհարաբերությունների վրա և այս պարագայում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձինք ավելի հակված են համագործակցության: Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի քննության համար տուժողները կարևոր դեր ունեն: Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման շատ դեպքերում միայն տուժողը կարող է բացատրել, նկարագրել հանցագործության հաջորդական գործողությունների շարքը:

Զոհակենտրոն մոտեցումը հենվում է անձի արժանապատվության, կարիքների վրա, իսկ մասնագետների կողմից մանրամասն և հանգամանալից իր դերի ու նշանակության բացատրելու պարագայում, առավել հավանական է, որ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձը կհամագործակցի և կաջակցի դեպքի բացահայտմանը:[34] Այսպես՝ զոհակենտրոն մոտեցումը նպաստում է արդարադատության համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը և դեպքերի բացահայտման թվի աճին:[35]

Զոհակենտրոն մոտեցումը մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի պահանջներին և կարիքներին միտված համակարգային մոտեցում է, որի հիմնական նպատակը քննչական և վարությաին այլ գործողությունների ընթացքում նրա նկատմամաբ զգայուն մոտեցման ապահովումն է՝ ոչ քննադատական միջավայրում՝ ապահովվելով մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի անվտանգությունը և ինքնազգացողության ճշտման առաջնահերթությունը: Զոհակենտրոն մոտեցումը ձգտում է նվազագույնի հասցնել արդարադատության իրականացման ընթացքում երկրորդային զոհականացումը, և դա վճռորոշ դեր է խաղում մարդու թրաֆիքնիգի կամ շահագործման ենթարկված անձանց իրավունքների, արժանապատվության, ինքնավարության և ինքնորոշման հարցում:[36]

Զոհակենտրոն մոտեցումն այդպիսով հենված է անձի արժանապատվության ու կարիքների վրա, իսկ մասնագետի կողմից մանրամասն և հանգամանալից իր դերն ու նշանակությունը բացատրելու պարագայում, առավել հավանական է, որ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձինք կհամագործակցեն և

---

[34] https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/What-does-Victim-Centered-mean-for-Criminal-Justice-Actors-FINAL.pdf, վերջին անգամ դիտվել է 08.02.2023թ.-ին:

[35] https://www.baliprocess.net/UserFiles/baliprocess/File/RSO-CIFAL-curriculum%20Enhancing%20a%20Victim-Centered%20Approach_A4_Final_2017-02-14_for-web.pdf, վերջին անգամ դիտվել է 08.02.2023թ.-ին:

[36] https://www.ovcttac.gov/taskforceguide/eguide/5-building-strong-cases/51-victim-centered-investigations/, վերջին անգամ դիտվել է 08.02.2023թ.-ին:

կաջակցեն գործի բացահայտմանը:[37] Այսպես՝ զոհակենտրոն մոտեցումը նպաստում է արդարադատության համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը և դեպքերի բացահայտման թվի աճին:[38]

Զոհակենտրոն մոտեցումը մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի պահանջներին և կարիքներին միտված համակարգային մոտեցում է, որի հիմնական նպատակը ծառայությունների զգայուն տրամադրումն է թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց՝ ոչ քննադատական միջավայրում: Զոհակենտրոն մոտեցում կիրառելիս թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի ցանկությունները, անվտանգությունը և ինքնազգացողությունն առաջնահերթ են բոլոր հարցերում և ընթացակարգերում: Զոհակենտրոն մոտեցումը ձգտում է նվազագույնի հասցնել արդարադատության գործընթացի հետ կապված երկրորդային զոհականացումը՝ տրամադրելով թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանների և ծառայություններ մատուցողների աջակցությունը, վերապրածներին հզորացնելով՝ որպես գործընթացում ներգրավված մասնակիցներ:

Զոհակենտրոն ծառայությունների մատուցման պարագայում՝ մասնագիտական հմտություններից, ռեսուրսներից, մշակութային բազմազանությունը և ներառականությունը հաշվի առնելուց զատ, առաջնային են վերապրածների հետ փոխհարաբերություններն ու վստահության ստեղծումը, վերապրած անձի կարիքները բավարարելու և օգնելու՝ անվտանգություն ստեղծելու համար:

Զոհակենտրոն մոտեցումը վճռորոշ դեր ունի մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց իրավունքների, արժանապատվության, ինքնավարության և ինքնորոշման հարցում՝ անկախ նրանից, թե նրանք որոշել են

---

[37] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/What-does-Victim-Centered-mean-for-Criminal-Justice-Actors-FINAL.pdf, վերջին անգամ դիտվել է 03.12.2022թ.-ին:

[38] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.baliprocess.net/UserFiles/baliprocess/File/RSO-CIFAL-curriculum%20Enhancing%20a%20Victim-Centered%20Approach_A4_Final_2017-02-14_for-web.pdf, վերջին անգամ դիտվել է 03.12.2022թ.-ին:

համագործակցել իրավապահ մարմինների հետ, թե՝ ոչ: Տուժողների համար, ովքեր որոշել են համագործակցել իրավապահ մարմինների հետ, քննության ողջ ընթացքում զոհակենտրոն մոտեցումը հիմնարար է:[39] Զոհակենտրոն մոտեցման կարևորագույն մաս է կազմում եզրույթների զգայուն օգտագործումը:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման տուժողների նկատմամբ զոհակենտրոն մոտեցումը դրսևորվում է՝

1) հանցագործության հետ չկապված հարցեր անհարկի չտալով,

2) հնարավորինս բացառելով լրացուցիչ հարցաքննությունները, բացառությամբ հիմնավոր անհրաժեշտ դեպքերի,

3) անհարկի չհետաձգելով քննչական կամ այլ վարութային գործողությունները և ապահովելով դրանց իրականացման ողջամիտ ժամկետները,

4) ապահովելով տուժողի հետ տեղեկությունների փոխանակման պարբերականությունը.

5) ապահովելով սույն ուղեցույցում նշված կանոնները,

6) տուժողի անվտանգությունից, նրա տարիքից կամ առողջական, ներառյալ՝ հոգեկան վիճակից ելնելով՝ հարցաքննությունը կամ առերեսումը կազմակերպել ռիսկերը գնահատելուց հետո,

7) տուժողներին թերահավատորեն չվերաբերվելով և չդատապարտելով,

8) հնարավորինս Հայաստանի Հանրապետության դատախազության, քննչական կոմիտեի, ոստիկանության նույն ծառայողի, փաստաբանի և դատավորի կողմից համապատասխան մասնագիտական գործունեությունն իրականացնելով՝ անհարկի չփոխարինելով կամ փոփոխելով այդ անձանց,

[39] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ovcttac.gov/taskforceguide/eguide/5-building-strong-cases/51-victim-centered-investigations/, վերջին անգամ դիտվել է 03.12.2022թ.-ին:

9) բացառելով բացասական բարոյահոգեբանական բնութագրի հիման վրա կարծրատիպային վերաբերմունքը:[40]

Եթե մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձը հատուկ կատեգորիայի զոհ է, ապա մոտեցումները պետք է լինեն նաև երեխայակենտրոն կամ հիմնված լինեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց չվնասելու կանոնի վրա:

Երեխայակենտրոն մոտեցումներն այն մոտեցումներն են, որոնք առաջնահերթությունները տալիս են երեխայի իրավունքներին ու կիրառվող գործողությունների դեպքում նախապատվությունը տալիս են երեխայի լավագույն շահին:

Երեխայի լավագույն շահին անդրադառնում են թե՛ միջազգային, թե՛ ազգային օրենսդրությունը, և թե՛ համապատասխան դատարանները: «Երեխայի լավագույն շահ»-ը նախատեսված է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածում[41] և այն ստացել է լայն մեկնաբանություն միջազգային պրակտիկայում: Այսպես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից անդրադառնալով

---

[40] Համանման մոտեցում նախատեսված է սեռական հանցագործությունների տուժողների համար: մանրամասն տես՝ Սեռական հանցագործությունների քննության առանձնահատկությունները. Մեթոդական ուղեցույց. Երևան, 2021:

[41] 1. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

2. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

3. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրի և մարմինների համապատասխանությունն իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես, անվտանգության և առողջապահության բնագավառներում դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանիության, ինչպես նաև իրավասու հսկողություն սահմանելու իմաստով:

«երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև՝ դատարանների կողմից երեխայի հարցերում վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից[42]:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր), իսկ նույն օրենսգրքի 8-րդ մասի համաձայն՝ եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ կիրառվել, ապա այն կիրառելիս առաջնահերթ հաշվի են առնվում Երեխայի լավագույն շահերը:

Երեխայի լավագույն շահի սկզբունքի էությունը երեխայի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական առողջ զարգացումն ապահովելն է. այլ կերպ ասած՝ նպաստել երեխայի անհատականության բնականոն զարգացմանը: Երեխան, ով չունի ֆիզիկական և հոգեբանական հասունության բավարար մակարդակ, ի

[42] Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի գործով ՄԻԵԴ-ի 09.05.2006թ. Case of C. v Finland (Application no. 18249/02)// https://hudoc. echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-75337%22]}, վճռի 52-րդ և 53-րդ կետեր և այլն:

տարբերություն չափահաս անձանց, ավելի շատ պաշտպանության կարիք ունի: Դա նշանակում է, որ երեխայի ոչ հասուն լինելը, որով պայմանավորված է վերջինիս խոցելիությունը, պետք է փոխհատուցվի համարժեք պաշտպանությամբ և հոգատարությամբ: Այդ համարժեք պաշտպանության ապահովմանն է ուղղված երեխայի՝ բռնությունից զերծ մնալու, իսկ բռնության ենթարկվելու դեպքում՝ պաշտպանվելու և աջակցություն ու ներկայացուցչություն ունենալու իրավունքները: Երեխան իր իրավունքների ճնշող մեծամասնությունն իրականացնում է օրինական ներկայացուցիչների միջոցով: Սակայն օրինական ներկայացուցչի կարգավիճակը երեխայի կարգավիճակի նկատմամբ բացարձակ ու անվերապահ գերակայություն չունի և չպետք է ունենա, և օրինական ներկայացուցիչները պարտավոր են հաշվի առնել երեխայի լավագույն շահը, երբ վերջիններս հանդես են գալիս երեխայի անունից: Բոլոր այն դեպքերում, երբ երեխայի լավագույն շահը հակասում է նրա օրինական ներկայացուցչի շահերին, նախապատվությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահին:[43]

Ըստ Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ «երեխայի լավագույն շահը» գնահատելը նշանակում է՝ գնահատել բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կյանքում որևէ միջամտություն իրականացնելու համար: Ընդ որում, այդ որոշումը բավական անհատական է, քանի որ յուրաքանչյուր դեպք, յուրաքանչյուր երեխա անհատ է և պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Երեխայի լավագույն շահի գնահատումը ենթադրում է հարցազրույցների իրականացում երեխայի և նրա ծնողների կամ խնամակալների հետ, տնային այցելությունների իրականացում, տեղեկատվության ստացում բոլոր այն կառույցներից, որտեղ երեխան ընդգրկված է եղել նախկինում կամ ընդգրկված է տեղեկատվության ստացման պահին:

[43] Մարաբյան Ս., Թումասյան Դ. Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները: Երևան, 2019, էջ 6:

Երեխայի լավագույն շահի սկզբունքը պահանջում է, որ երեխայի անձնական կյանքը հնարավորինս լավ պաշտպանված լինի՝ այդ առումով հատկապես կարևորելով երեխայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Սակայն, երեխայի լավագույն շահը և նրա անձնական կյանքը հարգելու իրավունքը կարող են երբեմն միմյանց հակադրվել: Այս դեպքում նախապատվությունը տրվում է երեխայի լավագույն շահին: Նման դեպքեր հանդիպում են հատկապես բժշկական սպասարկման ոլորտում:[44]

Միջազգային նշված փաստաթղթի վերլուծությունից կարելի է հանգել հետևության, որ տուժող երեխաների իրավունքների պաշտպանությունը պետք է հիմնված լինի հետևյալ գաղափարների վրա՝

1. երեխայի լավագույն շահը պետք է լինի վարույթն իրականացնող մարմնի առաջնային մտահոգության առարկան,

2. երեխայի նկատմամբ վերաբերմունքը պետք է հենված լինի խտրականության արգելքի սկզբունքի վրա, այսինքն, վերաբերմունքը պետք է անկախ լինի երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, կրոնից, համոզմունքներից, տարիքից, ընտանեկան կարգավիճակից, մշակույթից, լեզվից, ծագումից, ազգային կամ սոցիալական ծագումից, քաղաքացիությունից, սեռից, սեռական կողմնորոշումից, քաղաքական կամ այլ հայացքներից, հաշմանդամության առկայությունից, գույքային կամ այլ դրությունից,

3. երեխայի նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի խիստ զգայուն և հոգատար, այն է՝ ամբողջ վարույթի ընթացքում հարգել վերջինիս արժանապատվությունը՝ հաշվի առնելով նրա կոնկրետ իրավիճակը, մասնավորապես՝ տարիքը, սեռը, հաշմանդամությունը, եթե այն առկա է, ինչպես նաև հասունության աստիճանը,

[44] Ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին, Երևան, 2017, էջ 4:

4. երեխայի մասնավոր (անձնական) կյանքին միջամտությունը պետք է լինի նվազագույն, և այն պետք է տեղի ունենա միայն օրենքով սահմանված կարգով՝ նպատակ ունենալով ապահովելու ապացույցներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև արդար դատական քննության իրավունքի իրացումը,

5. երեխա տուժողի ինքնության գաղտնիությունը պետք է պաշտպանվի: Մասնավորապես, այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել որպես տուժող հանդես եկող երեխային, պետք է հրապարակվեն միայն դատարանի թույլտվությամբ:[45]

Երեխայազգայուն մոտեցումների կիրառումը կնպաստի մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխաների հետագա վերաինտեգրմանն ու վերասոցիալականացմանը հասարակությունում ու կբացառի նրանց պիտակավորումն ու խարանումը:

Եթե մարդու թրաֆիքինգի կամ բռնության ենթարկված անձն ունի հոգեկան առողջության խնդիրներ, ապա նրա նկատմամբ վերաբերմունքը պետք է լինի այնպիսին, որ հաշվի առնվեն նրա զարգացվածության մակարդակն ու առանձնահատկությունները: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ առնչվելիս պարտադիր է մասնագետի ներգրավումը և նրա հետ խորհրդատվության անցկացումը:

Երեխաների կամ հոգեկան առողջության խնդիրներ ունենալու հիմքով անգործունակ ճանաչված անձանց դեպքում պարտադիր է օրինական ներկայացուցչի մասնակցությունը, ինչը ոստիկանության ծառայողի կամ քննիչի համար լրացուցիչ գործողություն է, սակայն որն անհրաժեշտ է այդ անձանց իրավունքների պատշաճ պաշտպանության համար:

Այս համատեքստում կարևորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները, որոնց համաձայն՝

[45] Մարաբյան Ս., Թումասյան Դ. Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները: Երևան, 2019, էջեր 85-86:

անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվում է Կառավարության սահմանած կարգով[46] որակավորված հոգեբան: Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանն իրավունք ունի մասնակցելու նրա օրինական ներկայացուցիչը:

Հոգեբանն իր մասնակցությունը պետք է ծավալի իր մասնագիտական բնագավառում ունեցած հատուկ գիտելիքների շրջանակներում և նպաստի քննչական գործողության արդյունավետությանն ու մասնակից անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեբանական անվտանգության ապահովմանը: Իհարկե, կարևոր է ընդգծել, որ որակավորված հոգեբանի լիազորությունները չեն նույնացվում հոգեբան-փորձագետի լիազորությունների հետ, և որակավորված հոգեբանի կողմից տրված կարծիքը ո՛չ օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ կառուցվածքի պահպանման, ո՛չ բովանդակային վերլուծության առումով փորձագիտական եզրակացության հետ նույնական չէ: Ավելին, որակավորված հոգեբանն այն մասնագետն է, որի տրված կարծիքն էական նշանակություն կարող է ունենալ դատահոգեբանական, ինչպես նաև դատահոգեբանահոգեբուժական համալիր փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության առումով, ինչպես նաև ազդի քննչական գործողության ընթացքը փոփոխելու վրա:

Հոգեբանը կարող է մեծ դերակատարում ունենալ՝ մասնակցելով քննչական գործողություններին որպես մասնագետ և մասնագիտական գիտելիքներով աջակցել

---

[46] Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողություններին ներգրավվող հոգեբանների որակավորման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության N 847-Ն որոշումն ընդունվել է 2022 թ-ի հունիսի 9-ին: Եվ այդ որոշմամբ նաև ՀՀ արդարադատության նախարարին հանձնարարվել է կարգն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում սույն որոշմանը համապատասխան սահմանել՝ հոգեբանի որակավորման դասընթացների բովանդակությունը և դրանց անցկացման ծրագրերը, հոգեբանի որակավորման թեստերի կազմման կարգը, որակավորված հոգեբանի՝ առնվազն երեք տարին մեկ անգամ վերապատրաստում անցնելու կարգը, վերապատրաստման դասընթացի բովանդակությունը և անցկացման ծրագիրը, որակավորման վկայականի ձևը:

քննիչին, ինչպես նաև պաշտպանել անձանց երկրորդային զոհականացումից: Սակայն, եթե հոգեբանը չունի անչափահաս, անգործունակ կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հետ աշխատանքի անհրաժեշտ հմտություններ և փորձ, ապա նա ավելի մեծ հավանականությամբ կվնասի նրանց:

Հատուկ պետք է հիշել, որ սեռական բռնությունից, շահագործումից և ընտանիքում բռնությունից տուժածներից, ներառյալ՝ անչափահասների, ցուցմունքներ վերցնելու ընթացքն անխուսափելիորեն կլինի տրավմատիկ: Հարցաքննության ընթացքում հոգեբանի տրամադրած մասնագիտական գիտելիքների օգտագործմամբ քննիչը հնարավորություն է ստանում անչափահասից վերցնել ամբողջական և արժանահավատ ցուցմունքներ՝ արդեն իսկ տուժածի մոտ նվազագույնի հասցնելով քննչական գործողության ընթացքում կրկնակի հոգեբանական վնասը:[47]

Իհարկե, անչափահաս, անգործունակ կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք ունեն լրացուցիչ իրավունքներ և պարտականություններ, որոնք պայմանավորված են նրանց տարիքային, հոգեբանական կամ հոգեկան առանձնահատկություններով:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածը սահմանում է անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունների առանձնահատկությունները: Մասնավորապես, այդ անձանց հետ միասին քննչական գործողություններին մասնակցում են հոգեբանը և օրինական ներկայացուցիչը, ու քննչական գործողությունն սկսելուց առաջ հոգեբանին և օրինական ներկայացուցչին պարզաբանվում են քննչական գործողությանը մասնակցելու և դիտողություններ անելու իրավունքները:

---

[47] Մանրամասն տես՝ Васкэ Е.В. Психологический анализ поведенческого реагирования в юридически значимых ситуациях несовершеннолетних потерпевших по половым преступлениям// Психологические исследования, 2010, N3(11)/ http://psystudy.ru/index.php/num/2010n3-11/327-vaske11.html, վերջին անգամ դիտվել է 03.12.2022թ.-ին:

Ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությանը մասնակցող հոգեբանին և օրինական ներկայացուցչին բացատրվում է նաև հարցեր տալու նրանց իրավունքը, իսկ հոգեբանին՝ նաև կատարվող քննչական գործողության վերաբերյալ մասնագիտական առաջարկներ ներկայացնելու իրավունքը: Քննիչն իրավունք ունի հանելու տրված հարցերը կամ չընդունելու ներկայացված առաջարկները, սակայն, ամեն դեպքում, դրանք պետք է ներառվեն արձանագրությունում:

Հոգեբանի առաջարկությամբ և անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով՝ քննչական գործողությունը կատարվում է այնպիսի պայմաններում (վայրը, տևողությունը, մասնակիցների շրջանակը և այլն), որոնք թույլ կտան առավելագույնս երաշխավորել նրա լավագույն շահերը:

Հոգեբանի առաջարկությամբ և անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությունն սկսելուց առաջ քննիչն անչափահասին **տրվելիք հարցերը ձևակերպում և համաձայնեցնում է հոգեբանի հետ:**

Հոգեբանի առաջարկությամբ և անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով ձերբակալվածի, մեղադրյալի կամ նրա պաշտպանի հարցերն անչափահասին տրվում են հոգեբանի հետ համաձայնեցնելուց հետո՝ առանց անչափահասի հետ անմիջական հաղորդակցության (այս հանգամանքը հատկապես կարևորվում է առերեսման դեպքում[48]): Ցուցմունք տալու հետ կապված քննչական գործողությանը մասնակցող և 16 տարին չլրացած անչափահասին բացատրվում է ճշմարտացի ցուցմունք տալու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունք տալուց հրաժարվելու և սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին:

---

[48] Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց մասնակցությամբ կատարվող առանձին քննչական գործողություններ կներկայացվեն 6-րդ պարագրաֆում:

Հոգեբանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը լրացուցիչ երաշխիք է անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար:[49]

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի մասնակցությամբ քննչական կամ այլ վարութային գործողություններ պլանավորելիս հաշվի են առնվում՝

1) քննչական կամ այլ վարութային գործողության անցկացման վայրը և ժամանակը որոշելը՝ ելնելով տուժողի առանձնահատկություններից և հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը,

2) քննչական կամ այլ վարութային գործողությունների անցկացումը հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից կամ նրանց մասնակցությամբ,

3) քննչական կամ այլ վարութային գործողությունները նույն անձի կողմից իրականացնելու հնարավորությունը,

4) տեսաձայնագրության կամ ձայնագրության կիրառման հնարավորությունը:

[49] Մանրամասն տես՝ Թումասյան Դ., Սոլոմոնյան Ն., Գմյուր Ա. Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողությունների իրավական կարգավորումը և հոգեբանական առանձնահատկությունները. Ուսումնական մոդուլի ուղեցույց: Երևան, 2021, էջեր 51-52:

Ամփոփում

Ամփոփելով վերոգրյալը կարելի է նշել, որ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարը բազմամասնագիտական, տևական ու բարդ գործընթաց է, որում ներգրավված բոլոր մարմիններն ու կազմակերպություններն ունեն համագործակցային սկզբունքով արդյունավետորեն աշխատելու պարտականություն:

Այդ գործընթացում հատուկ կարևորվում է ՀՀ դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների, փաստաբանների և դատավորների դերը, որոնք մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի հետ մշտապես շփվող, նրանց պաշտպանությունն ապահովող հիմնական դերակատարներն են:

ՀՀ դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի ծառայողները, փաստաբանները և դատավորներն իրենց մասնագիտական գործունեության ընթացքում պետք է ոչ միայն առաջնորդվեն մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին պաշտպանող միջազգային և ազգային օրենսդրությամբ, այլ նաև կիրառեն համապատասխան մեթոդաբանություն ու տակտիկաներ, որոնք անհրաժեշտ են այդ զոհերի իրավունքներն արդյունավետորեն պաշտպանելու և երկրորդային զոհականացումը բացառելու համար:

ՀՀ դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների, փաստաբանների և դատավորների պատրաստվածության աստիճանից է կախված մարդու թրաֆիքինի կամ շահագործման կոնկրետ դեպքի բացահայտման և քննության արդյունավետությունը, և այդ հանգամանքով է պայմանավորված նաև վստահելիությունն իրավապահ համակարգին ու արդարադատությանը:

Սույն մեթոդաբանությունում ներկայացված տեղեկությունները ելակետային են զոհակենտրոն մոտեցումն ապահովվելու համար ու ներկայացված մոտեցումների

կիրառումը պետք է դառնա ՀՀ դատախազության, ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների, փաստաբանների և դատավորների առօրյա աշխատանքի բաղկացուցիչ մասը:

Առաջարկվող գրականության ցանկ

Միջազգային և ազգային իրավական ակտեր

1. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 2000թ. կոնվենցիա

2. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կից 2003թ. արձանագրությունը՝ մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին

3. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կից 2004թ. արձանագրությունը՝ ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ

4. Հարկադիր աշխատանքի մասին թիվ 29 ԱՄԿ-ի 1930թ. կոնվենցիա

5. Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին թիվ 105 ԱՄԿ-ի 1957թ. կոնվենցիա

6. Ստրկության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի 1926թ. կոնվենցիա

7. Ստրկության վերացման, ստրկավաճառության և ստրկությանը մոտ սովորույթների ու ինստիտուտների վերացման մասին լրացուցիչ ՄԱԿ-ի 1956թ. կոնվենցիա

8. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիա

9. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին ԵԽ 2005թ. կոնվենցիա

10. Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին ԵԽ 2007թ.-ի կոնվենցիա

11. ՀՀ Սահմանադրություն ընդունված 06.12.2005թ., ուժի մեջ՝ 22.12.2015թ.

12. ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 05.05.2021թ., ուժի մեջ՝ 01.07.2022թ.

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 30.06.2021թ., ուժի մեջ՝ 01.07.2022թ.

14. ՀՀ ընտանեկան օրենսգիրք՝ ընդունված 09.11.2004թ., ուժի մեջ՝ 19.04.2005թ.

15. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» 2014թ.-ի դեկտեմբերի 17-ի ՀՀ օրենք

16. «Երեխայի իրավունքների մասին» 1996թ.-ի մայիսի 29-ի ՀՀ օրենք

17. «Հայաստանի Հանրապետությունում 2020-2022 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» 2020թ.-ի հունիսի 4-ի ՀՀ կառավարության N909-Լ որոշում

18. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին, հատուկ կատեգորիայի զոհերին և նրանց օրինական ներկայացուցիչներին «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանության տրամադրման կարգը հաստատելու մասին» 2015թ.-ի հոկտեմբերի 29-ի ՀՀ կառավարության N1356-Ն որոշում

Մասնագիտական գրականություն

19. Ասրիյան Ն., Թումասյան Դ. ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական ծառայության աշխատակիցների վերապատրաստման դասընթացների «Մարդու շահագործումը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարը» ձեռնարկ. Երևան, 2014.

20. Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները, Երևան, 2011.

21. Թումասյան Դ. Տուժողի կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում. Երևան, 2020.

22. Թումասյան Դ., Սոլոմոնյան Ն., Գմյուր Ա. Անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ քննչական գործողությունների իրավական կարգավորումը և հոգեբանական առանձնահատկությունները. Ուսումնական մոդուլի ուղեցույց: Երևան, 2021.

23. Թումասյան Դ., Վիրապյան Է., Դավթյան Ս. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման բնութագիրը և թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանությունն ու աջակցությունը. Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար. Երևան, 2022.

24. Թումասյան Դ., Նիկողոսյան Ա. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով քրեական գործերի քննության ընթացքում զոհակենտրոն մոտեցումներ (մեթոդական ուղեցույց դատավորների, դատախազների և քննիչների համար). Երևան, 2022.

25. ՀՀ ԱՍՀՆ և ԵԱՀԿ «Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն» ծրագրի տարեկան զեկույցը, 2010.

26. Մարաբյան Ս., Թումասյան Դ. Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները: Երևան, 2019.

27. Սեռական հանցագործությունների քննության առանձնահատկությունները. Մեթոդական ուղեցույց. Երևան, 2021.

28. Ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին, Երևան, 2017.

29. Прямая помощь жертвам торговли людьми, МОМ и ОБСЕ, Москва, 2010.

30. Devine S. Psychosocial and Mental Health Service Provision for Survivors of Trafficking International Organization for Migration (IOM), 2009, էջեր 10-11:

31. Chambers R., Gibson M., Chaffin S., Takagi T., Nguyen N., Mears-Clark T. Trauma-coerced Attachment and Complex PTSD: Informed Care for Survivors of Human Trafficking, Journal of Human Trafficking, 2002.

32. Zimmerman C., Hossain M., Yun K., Roche B., Morison L., and Watts Ch. Stolen smiles: The physical and psychological health consequences of women and adolescents trafficked in Europe, The London School of Hygiene & Tropical Medicine, 2006.

33. Campbell R. The community response to rape victims' experiences with legal, medical and mental health systems// American Journal of Community Psychology, 1998, Vol. 26, No 3.

Էլեկտրոնային աղբյուրներ

34. https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/Victim-Centered-Approach-to-Human-Trafficking-Cases-FINAL.pdf

35. https://www.who.int/news-room/fact-sheets/detail/mental-health-strengthening-our-response

36. https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5618827/

37. https://growfreetn.org/2020/07/28/psychological-effects-of-human-trafficking-depression-anxiety-substance-use-part-1/

38. https://growfreetn.org/2020/07/28/psychological-effects-of-human-trafficking-shame-isolation-loss-of-self-part-2/

39. https://awkolaw.com/no-escape-the-enduring-effects-of-trauma-on-the-emotional-health-of-human-trafficking-survivors/

40. http://www.stopvaw.org/secondary_victimization

41. https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/What-does-Victim-Centered-mean-for-Criminal-Justice-Actors-FINAL.pdf

42. https://www.baliprocess.net/UserFiles/baliprocess/File/RSO-CIFAL-curriculum%20Enhancing%20a%20Victim-Centered%20Approach_A4_Final_2017-02-14_for-web.pdf

43. https://www.ovcttac.gov/taskforceguide/eguide/5-building-strong-cases/51-victim-centered-investigations/

44. http://psystudy.ru/index.php/num/2010n3-11/327-vaske11.html

45. https://www.arlis.am/

46. http://investigative.am

47. https://www.irtek.am

48. http://www.parliament.am